

Մ-35

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՄԵՍՏՐԱՐՈՒԹՅԱՆ
ԴՐԱՍՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՄԻԿՈՆ ԳԱՐԵԳԻՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՆ

ԻԳ.00.02. «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ
քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար
ներկացված ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2012


Գիտական ղեկավար՝	քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ Խաչիկ Սամվելի Գալստյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	քաղաքական գիտությունների դոկտոր Ա. Վ. Աբանեսյան քաղաքական գիտությունների թեկնածու Ա. Բ. Ջաքարյան
Առաջատար կազմակերպություն՝	Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2012 թ. հունիսի 12-ին՝ ժամը 14:00-ին,
ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ում գործող ՀՀ ԲՈՅ-ի 056 «Քաղաքական գիտությունների և միջազգային հարաբերությունների» մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ ՀՀ 0037, ք. Երևան, Կ. Ուլենցի փողոց 56/6:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թ. մայիսի 12-ին

056 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
Պատմական գիտությունների դոկտոր Պ. Ա. Չոբանյան



Թեմայի արդիականությունը: Անկախության հռչակումից հետո, Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի կերպափոխմամբ պայմանավորված անհրաժեշտություն առաջացավ ազատական-ժողովրդավարական արժեքային համակարգի շրջանակներում վերաիմաստավորել քաղաքական կայունությունը: Այս համատեքստում, շեշտադրելով քաղաքական կայունության հաստատման գործընթացներ քաղաքակրթական տարամիտվածությունը, կարևորվեցին փոփոխություն-կայունություն-անվտանգություն փոխհարաբերությունների հիմնախնդիրները, որոնք պայմանավորված են համագործակցության մշակույթի հաստատմամբ և քաղաքական շուկայի արդիականացմամբ: Այլապես «Ժայրամասերը» ոչ միայն չեն կարողանում ինտեգրվել զլորբալ ցանցակառավարմանը, այլև դուրս են մնում աշխատանքի միջազգային մրցաժամանակ գործընթացներից՝ դառնալով էժան աշխատուժի արտահանման, ինչպես նաև «համացանցային սերնդի» ինքնահաստատման ուղղված պատրանքային հեղափոխությունների փորձադաշտ: Արդի հասարակության կայացման բազմաչափ գործընթացն արդիականացրել է քաղաքական կայունության և ազգային անվտանգության ապահովման (այսուհետ՝ ԱԱԱ) հիմնախնդիրները՝ ընդարձակելով քաղաքական գործընթացի դերակատարներին: Որպես պատմականորեն ձևավորված որոշակի նորմերի և արարողակարգերի ամբողջություն՝ քաղաքական կայունությունը փոխակերպում է համակարգը՝ զուգամիտելով ինչպես քաղաքակրթական և սոցիալ-հոգեբանական այնպես էլ սահմանադրափրավական նորմերը:

Պատրանքային հեղափոխությունները, ահաբեկչությունը, աղքատությունը, էկոլոգիական ճգնաժամերը, արտակարգ իրավիճակները, թրաֆիկինգը, նարկո և պոռն քիզմեսը սպառնալիք են ՀՀ ազգային անվտանգությանը: Վերջինիս ապահովման նկատառումներով, աստիճանակարգային կառավարմանը զուգահեռ, գործառույց ցանցային ռիսկերի կառավարումը նոր հրամայականներ է առաջադրել ՀՀ քաղաքական համակարգի կայունությանը: Ցանցային ռիսկերի կառավարումն իր ռազմավարություն կառուցում է հանրային, մասնավոր և խմբային շահերի միջև փոխհարաբերություններ համադրման վրա՝ հնարավորություն տալով նրանցից յուրաքանչյուրին միջազգային մակարդակում համագործակցային անվտանգության (cooperative security) քաղաքականությունում դերակատարություն ստանձնել: ՀՀ-ում քաղաքական կայունության կայուն զարգացման փոխպայմանավորվածությունը, որպես բազմաչափ փոփոխությունների ամբողջության ուսումնասիրում, բացահայտում է ազգային անվտանգության և ժողովրդավարության որակի միջև եղած կապը՝ մասնակցելով համաշխարհային արժեքների հաստատման ռազմավարական գործընթացներին: Վերջին օգնությամբ բազմակետոր ազգային անվտանգության ապահովման նկատառումներով «անցում-համախմբում» հարացույցի ենթատեքստում շեշտադրվում է ՀՀ-ում ժողովրդավարական կայունության հաստատման հիմնախնդիրը՝ քաղաքական զարգացման ճգնաժամերի և մարզինալության կանխման նկատառումներով:

Ամփոփելով ասվածը՝ կարող ենք նշել հետազոտության արդիականությունը պայմանավորող հետևյալ հանգամանքները՝

- քաղաքական համակարգի համալիր արդիականացման համատեքստում կայունության ուսումնասիրության անհրաժեշտություն՝ հաշվի առնելով ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրները,
- քաղաքական կայունության-անկայունության տիրույթներում ազգային անվտանգության «կոշտ» և «փափուկ» ձևերի փոխհարաբերություններն ընդհանրելով,
- մարզինալությունը որպես քաղաքական համակարգի կայունության սպառնալիքի բացահայտումը,

- Լեզվափոխության քաղաքակրթական փոխակերպումների փաստարկման անհրաժեշտությունը՝ կայուն անվտանգության ռազմավարության մշակման գործընթացում
- Ժողովրդավարական կայունության ապահովում՝ ՀՀ-ում քաղաքական կոալիցիաների գործառնման դինամիկայում,
- համազորակցության մշակույթի հումանիստական էության տիրույթներում «Հայկական աշխարհի» սոցիալական տարածության ընդարձակում:

Հետազոտության հիմնական նպատակներն ու խնդիրները: Սույն ատենախոսության հիմնական նպատակը քաղաքական կայունությունը՝ իբրև ՀՀ ազգային անվտանգության ապահովման գործոնի ուսումնասիրությունն ու տեսական առաջարկությունների մշակումն է: Ժողովրդավարական քաղաքական կայունության հաստատման նկատառումներով մարզինալության հաղթահարման, ինչպես նաև Լեզվափոխության քաղաքակրթական փոխակերպումների արդյունավետության դիտարկումն է՝ ազգային շահի սոցիալական տարածության ընդարձակման գործընթացում: Միևնույն ժամանակ քաղաքական կայունությունն ուսումնասիրվել է ՀՀ ազգային անվտանգությունն ապահովելու և ներդաշնակ-աններդաշնակ սպառնալիքները կանխատեսելու, ինչպես նաև դիմակայելու համար: Նշված նպատակի իրականացման նկատառումներով առաջարկում ենք հետևյալ կոնկրետ խնդիրները.

- ուսումնասիրել քաղաքական կայունությունը՝ որպես համալիր արդիականացման ամբողջություն,
- բացահայտել ազգային անվտանգության ապահովման արժեքային բազմաչափությունը,
- դիտարկել քաղաքական կայունության և անկայունության համակարգաստեղծ սկզբունքները՝ ազգային անվտանգության ապահովման համատեքստում,
- վերլուծել քաղաքական կայունության և կայուն զարգացման փոխհարաբերությունները ապահովող մեխանիզմները ՀՀ-ում՝ շարունակական ժողովրդավարության պայմաններում,
- կարևորել մարզինալությունը որպես ՀՀ քաղաքական համակարգի կայունության սպառնալիք,
- շեշտադրել Լեզվափոխության քաղաքակրթական փոխակերպումները՝ որպես ՀՀ կայուն անվտանգության ռազմավարություն,
- հիմնավորել ազգային շահի կերպափոխումը միջին խավի ձևավորման աստիճանակարգային և ցանցային տիրույթներում,
- փաստարկել քաղաքացիավարությունը որպես ազգային մրցունակության բաղադրիչ,
- կանխատեսել ՀՀ ազգային անվտանգության ապահովման տիրույթներում ձևավորվող Հայկական աշխարհի գործառնման մեխանիզմները ռիսկերի ցանցակառավարման համատեքստում,
- վերլուծել ժողովրդավարության որակի և համազորակցության մշակույթի արդիականացման միտումները ժողովրդավարական կայունության ապահովման պայմաններում:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Հիմնախնդրի ուսումնասիրության մեթոդների ընտրության հարցում որոշիչ են քաղաքական գիտության լարգացման արդի հրամայականները: Քաղաքական կայունության ուսումնասիրությունն իրականացվել է անցումագիտության, համախմբագիտության, գլոբալիստիկայի, քաղաքական մարքեթինգի, քաղաքական հերմենևտիկայի, մեթոլոգիայի (ցանցափոխության), ինչպես նաև անվտանգագիտության (սեկյուրիտոլոգիա) շրջանակներում:

Նշված գիտաճյուղերի տիրույթներում օգտագործվել է ինչպես համակարգային, այնպես էլ զարգացման դիալեկտիկական մեթոդաբանությունը՝ համադրելով քաղաքական կայունության ինստիտուցիոնալ, սոցիալ-հոգեբանական և քաղաքակրթական դինամիկան: Կիրառված են նաև սիներգետիկ և մարքեթինգային մեթոդները: Այս ամենը հնարավորություն է տվել քաղաքական կայունությունը՝ որպես ՀՀ ազգային անվտանգության ապահովման գործոնի դիտարկել բազմաչափության մեջ՝ անցման հարացույցը փոխարինելով համախմբման հարացույցով:

Ուսումնասիրության առարկան: Ցանցային կառավարման պայմաններում ժողովրդավարական կայունության հաստատումն է որպես ՀՀ ազգային անվտանգության ապահովման գործոն:

Ուսումնասիրության օբյեկտը: ՀՀ ազգային անվտանգության ապահովման քաղաքականությունն է ժողովրդավարական կայունության հաստատման, ինչպես նաև համազորակցային մշակույթի արդիականացման պայմաններում:

Հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը: Ձեռնարկելով մեզ հետաքրքրող հիմնախնդրի ուսումնասիրությունը՝ ելակետ ենք ընդունել Կ. Պոպպերի հետևյալ մոտեցումը. «Գիտության մեջ ճշմարտության մենաշնորհ գոյություն չունի, իսկ ճշմարտության հասնելու երաշխիքը կուտակված փորձի և անցյալի նվաճումների ստեղծագործական զարգացումն է և օբյեկտիվ մեկնությունը»¹:

Դեռևս անտիկ աշխարհում քաղաքական կայունության և անվտանգության վերաբերյալ համակարգային վերլուծություններ են կատարել Պլատոնը, Արիստոտելը, Տիցերոնը, Պոլիբիոսը և այլք²: Վերջիններիս գաղափարները համակարգեց է Ն. Սաքիավելին³, որը, Տիրակալին (Պրինցեսս) դիտարկելով ազգային պետության կայունության և անվտանգության երաշխավոր, օգտագործեց «Stato» հասկացությունը: Անգլիական բուրժուական հեղափոխությունից հետո հասարակական առաջընթացի ապահովման նպատակով Թ. Հոբսը և Ջ. Լոքը կարևորեցին պետական իշխանության կայունության և անվտանգության փոխպայմանավորվածությունները⁴:

Սողեռնի դարաշրջանից սկսված՝ ուսումնասիրվում են քաղաքական կայունության հեղափոխական և բնաշրջման մոդելները, որոնց տիրույթներում էլ Հին, Նոր, Նորագույն աշխարհներում մշակված ազգային անվտանգության մեխանիզմներն արդիականանում են տեղեկատվահաղորդակցական տարաբնույթ հոսքերի առկայությամբ⁵:

20-րդ դարի 50-ական թթ.-ից մինչ այսօր քաղաքական կայունության վերաբերյալ տարաբնույթ մոտեցումներ են մշակվել: Այս շրջանակներում, համակարգելով սոցիալական անվտանգության հայեցակարգը, Պ. Ա. Սորոկինը հարաբերական անկախության մեջ ուսումնասիրեց սոցիալական և քաղաքական համակարգերի կայունության-անկայունության փոխհարաբերությունները⁶: 20-րդ դարի 60-ականներից,

¹ St'u Поппер Карл Р. Объективное знание. Эволюционный подход. Пер. с англ. Д. Г. Лахути. Отв. ред. В. Н. Садовской. - М.: Эдиториал УРСС, 2002:

² St'u Платон. Сочинения. В 3-х тт. М., Мысль, 1968-1971; Аристотель. Сочинения. В 4-х тт. М., Мысль, 1976-1984; Цицерон Марк Туллий. О государстве. О законах. О старости. Об обязанностях. Речи. Письма/ Предисл. Е. И. Егупова, М. 1999; Полибий. Всеобщая история. В 3-х тт. СПб., 1994:

³ St'u Макиавелли Н. Б. Сочинения. Изд. 2-е, М., Наука, 2002:

⁴ St'u Гоббс Т. Левиафан, или материя, форма и власть государства церковного и гражданского. - М.: Мысль, 2001, Локк Джон. О государственном правлении. Избранные философские произведения. Под общ. ред. А. А. Макаровского, Издательство социально-экономической литературы. М.-1960:

⁵ St'u Кастельс М., Информационная эпоха: экономика, общество и культура: Пер. с англ. под научн. Ред. О.И. Шкаратина. - М., ГУ ВШЭ, 2000; Уэбстер Ф., Теории информационного общества /Пер. с англ. М. В. Арапова, Н. В. Малыхиной; Под ред. Е. Л. Вартановой. - М., Аспект Пресс, 2004

⁶ St'u Сорокин П. А. Общедоступный учебник социологии. - М.: Наука, 1994; Сорокин П. А. Главные тенденции нашего времени. - М.: Ин-т. Социологии РАН, 1993; Сорокин П. А. Человек и общество в условиях бедствия // Сорокин П. А. / Вопросы социологии, М., - И 3. - 1993

«Հռոմեական ակունքի»⁷ գործունեությամբ պայմանավորված, գիտատեխնիկական, տեխնոլոգիական, տեղեկատվական և հաղորդակցական արժեքների հազեցվածության պայմաններում բնության էկոլոգիայի հետ համատեղ քննարկվեց բանականության էկոլոգիան⁸ ոչ միայն գերիշխելու և ինքնորոշվելու, այլ համագործակցելով՝ անվտանգություն ապահովելու տրամաբանությամբ: Այս համատեքստում արդիականացման տեսաբանները քաղաքական կայունության և կայուն զարգացման փոխհարաբերությունների բազմաչափության շեշտադրմամբ փորձեցին կանխել «ծայրամասերի կենտրոնների» միջև հաստատված անկայունությունը՝ հանուն գլոբալ անվտանգության⁹: Նմանօրինակ մոտեցման արդյունքում, քաղաքական կայունությունն ու արդիականացումը դիտարկելով համակցության մեջ, Ժ. Էլյուրը¹⁰ առաջադրեց տեխնաթին անկայունության մասին իր տեսությունը, որն անհատին մղում է քաղաքական պատրանքի:

Արդեն 20-րդ 90-ականներից խաղաղության հետազոտությունների կոպենհագենյան դպրոցը ձևավորած Յոհան Գալթունգի, Բարրի Բուզանի, Բեյն Վիլհամի և ուրիշ հետազոտողների գաղափարները «կոշտ» և «փափուկ» անվտանգություն ապահովող մեխանիզմի մասին, շեշտադրեցին կայունության կողմնակից սոցիալական դերակատարների արդիականացման հիմնախնդիրը¹¹:

Կերպափոխվող հասարակություններում քաղաքական կայունության և անկայունության համեմատական հետազոտությունների հիման վրա Ս. Դանթինգոն¹² և Ա. Լեյփհարթը կարևորեցին սոցիալական օրգանիզմի հիշողությունը՝ փաստելով, որ ավանդական ինստիտուցիոնալ արժեքներն արգելք չեն համալիր արդիականացման համար¹³: Դիտարկելով քաղաքական կայունությունը որպես ԶԶ ԱԱ գործոն՝ զուգամիտված է Ա. Դանթինգոնի «Արևմուտքը և մնացյալ աշխարհը» և Ֆարիդ Ջաքարիայի¹⁴ «Կենտրոն-ծայրամաս հավասարաչափ զարգացման» դրույթները: Նմանօրինակ մոտեցումը ընդարձակեց քաղաքական կայունությունը՝ որպես համալիր արդիականացման ամբողջության դիտարկման սոցիալական տարածություն¹⁵:

Վերոնշյալը քաղաքական արդիականացման տեսաբաններին դրդեց կարևորել քաղաքական համակարգում անկայունությունը կանխելու հանգամանքը՝ «անցում-

համախմբում» հարացույցի բազմակողմանի ուսումնասիրման միջոցով¹⁶: Այս նկատառումներով փոփոխություն-կայունություն-անվտանգություն բազմամակարդակ քաղաքակրթական գործընթացների («աֆրիկյան», «եվրոպական», «արևելյան», «հետխորհրդային»)՝ հաջողությունը ապահովելու համար դիտարկվեցին կայունության-անկայունության համակարգաստեղծ սկզբունքները: Ցանկանալով կանխել ինստիտուցիոնալացման ճգնաժամի արդյունքում առաջացած անորոշությունները՝ կիրառվեցին նոր կառուցակարգեր սիներգետիկական մոտեցման օգնությամբ¹⁸: Ենթադրվում էր, որ վերջինս կբարձրացնի համագործակցության կազմակերպման աստիճանը՝ կանխելով ազգային անվտանգության դեմ ուղղված ներդաշնակ և աններդաշնակ սպառնալիքները ինչպես աստիճանակարգային, այնպես էլ ցանցային կառավարման միջոցով¹⁹: Արդյունքում ժողովրդավարացման «երրորդ ալիքի» երկրների փորձագետները բազմաբնույթ նյութ են կուտակել՝ արդիականացող քաղաքական համակարգերի ժողովրդավարական կայունության և ազատության չափանիշների վերաբերյալ²⁰: Մշակելով քաղաքական կայունության գնահատման նորագույն սկզբունքներ՝ նրանք կարևորեցին ռիսկի, փոփոխության, տարածության, ժամանակի, սթրեսի կառավարումը՝ ազգային անվտանգության ապահովման բազմաչափության տիրույթներում:

Այս նորագույն մոտեցումները հիմնվում են գլոբալ տնտեսության և մշակույթի ձևավորման վրա, քանի որ քաղաքական կայունություն ապահովող ավանդական ինստիտուտներին (պետություն) զուգահեռ բազմաալիս ցանցային սկզբունքով գործող կրոնական, քաղաքական, սոցիալական, հաղորդակցական և այլ ինստիտուտների համագործակցությամբ ապահովվում է անվտանգություն²¹:

¹⁶ St'u Панарин А.С., Глобальное политическое прогнозирование в условиях стратегической нестабильности, М., Эдиториал УРСС, 1999; Панарин А.С. Стратегическая нестабильность в XXI веке. - М., Алгоритм, 2003; Донцов А. И. Социальная стабильность: от психологии до политики: монография/ Александр Донцов, Елена Перельгина.-М.: Эксмо, 2011; Модернизация и политика в XXI веке/ отв. ред. Ю. С. Оганисян; Ин-т социологии РАН.-М.: Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2011; Иноземцев В. Л. Демократия и модернизация: к дискуссии о вызовах XXI века/ Центр исследований постиндустриального общества; Вступ. Статья В. Л. Иноземцева.-М.: Европа, 2010; Мировая политика в условиях кризиса. Под. ред. С. В. Кортюнова.-М.: Аспект Пресс, 2010:

¹⁷ St'u Хантингтон С., Политический порядок в меняющихся обществах. - М., Прогресс-Традиция, 2004; Хантингтон С., Третья волна. Демократизация в конце XX века / Пер. с англ.-М., Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2003; Шеворский А., Демократия и рынок. Политическое и экономические реформы в Восточной Европе и Латинской Америке. Пер. с англ./ Пор ред. проф. Бажанова В. А. - М., Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2000; Лейпхарт А., Демократия в многосоставных обществах: сравнительное исследование / Пер. с англ. под ред. А. М. Салмина, Г. В. Каменской.- М., Аспект-Пресс, 1997; Хелд Д и др., Глобальные трансформации: Политика, экономика, культура / Пер. с англ. В.В. Сапова и др., М., Праксис, 2004; Алмонд Г., Верба С., Гражданская культура и стабильность демократии / Полис, 1992, N 4, Горбачев М.С. и др., Грани глобализации. Трудные вопросы современного развития., М., Альпина Паблишер, 2003; McFaul M., The Forth Wave of Democracy and Dictatorship. Noncooperative Transitions in the Postcommunist World, World Politics, 2002, January.

¹⁸ St'u Пригожин И. Стенгерс И. Порядок из хаоса. Новый диалог человека с природой. - М.: Эдиториал УРСС, 2000.; Эбелинг В., Энгель А., Физика процессов эволюции, М., Эдиториал УРСС, 2001 Малинецкий Г.Г., Хаос. Структуры. Вычислительный эксперимент: Введение в нелинейную динамику. М., Эдиториал УРСС, 2000; Синергетическая парадигма. Нелинейное мышление в науке и искусстве. М., Прогресс-Традиция, 2000; Арнольд В.И., Теория катастроф. М., Наука, 1990; Табор М., Хаос и интегрируемость в нелинейной динамике. Пер. с англ., М., Эдиториал УРСС, 2001.

¹⁹ St'u Зидентоп Л., Демократия в Европе, Пер. с англ., Под ред. В.Л.Иноземцева, М., 2004; Кин Дж., Демократия и гражданское общество, Пер. с англ., Послесл. М.А. Абрамова, М., 2001; Политическая наука: новые направления, Под. ред. Р. Гудина и Х.-Д. Клингеманна, М., 1999; Горбачев М.С., Грани глобализации: Трудные вопросы современного развития, М., 2003; Удовик С.Л., Глобализация: семиотические подходы, М., Рефл-бук, 2002;Сорес Дж. О глобализации\Пер. с англ. А. Ваширова. М., Изд-во Эксмо, 2004:

²⁰ St'u <http://www.freedomhouse.org/template.cfm?page=1>

²¹ St'u Սարգսյան Տ., Պետության վախճանը (կամ հասարակության կազմակերպման նոր ձևը), 21-րդ դար, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, N 1(19), էր., 2008; Сморгунов Л. В., От электронного государства к электронному правлению: Смена парадигмы; Фонзтэйн Дж. Е., Институциональное развитие в виртуальном государстве: Недостоющее звено в технологическом видении e-government / Политическая наука, 2007, N 4;

⁷ St'u Медоуз Д., Рандерс Й., За пределами роста. М., Прогресс-Универс. 1994; Брудный А. А., Кавтарадзе Д. Н., Сопряженное развитие природы и общества // Экология малого города. Программа "Экополис." Пущино 1987; Печечи А., Человеческие качества. М., Мир 1984; Шварц Е. А., Сохранение биоразнообразия: сообщества и экономисты М., Товарищество научных изданий КМК, 2004:

⁸ St'u Бейтсон Г., Экология разума. Избранные статьи по антропологии, психиатрии и эпистемологии / Пер. с англ. М., Смысл, 2000

⁹ St'u Кеннеди П., Вступая в двадцать первый век, Пер. с англ. / М., Издательство "Весь мир", 1997; Глобализация и столкновение идентичностей. Международная интернет-конференция / Сб. материалов; Под ред. А. Журавского, К. Костюка. - М., 2003:

¹⁰ St'u Эллиуль Жак. Политическая иллюзия. Пер. В. В. Лазарева.-М.: NOTA BENE Media Trade Co. 2003:

¹¹ St'u Չալթունգ Զ., Խաղաղություն խաղաղ միջոցներով. Խաղաղություն և հակամարտություն, զարգացում և քաղաքակրթություն, ՄՍԱԿ, Եր., 2005, Buzan Barry. People, states and fear: the national security problem in international relations. Great Britain, Biddies Ltd., 2007, Bain William. The empire of security and the safety of the people. Routledge, Taylor&Francis group, NY, 2006, Kari Laitinen. "Reflecting the Security Border in the Post-Cold War Context" // International Journal of Peace Studies. Volume 6, N 2, autumn - Winter 2001, http://www.gmu.edu/programs/icar/ijps/vol6_2/Laitinen.htm (01.03.2012):

¹² St'u Хантингтон С., Политический порядок в меняющихся обществах, 2003; Хантингтон С., Третья волна. Демократизация в конце XX века / Пер. с англ.-М., Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2003; Хантингтон С., "Кто мы? Вызовы американской национальной идентичности", Транзитнига, М., 2004.

¹³ St'u Хантингтон С., Политический порядок в меняющихся обществах. - М., Прогресс-Традиция, 2004; Лейпхарт А., Демократия в многосоставных обществах: сравнительное исследование / Пер. с англ. Под ред А.М. Салмина, Г.В.Каменской. - М., Аспект Пресс, 1997

¹⁴ St'u Zakaria Fareed. The Post-American World. NY, W. W. Norton & Company Inc., 2008:

¹⁵ St'u Kinley David. Civilising globalization: human rights and the global economy. Cambridge University Press, UK, 2009; Kaarbo Juliet, James Lee Ray. Global Politics, 10th edition. WADSWORTH CENGAGE learning, Boston, MA, 2011:

Այս համատեքստում էլ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության ապահովման գործընթացը համապարփակ ուսումնասիրել է Հ. Ս. Քոթանջյանը²² շեշտադրելով, որ «ազգային անվտանգությանն ուղղված ներքին և արտաքին ներդաշնակ-աններդաշնակ սպառնալիքներին համակողմանի պատասխանելու համար կարևոր է մասնակցել նոր աշխարհակարգի կայացման և լինելիության գործընթացին»²³:

Քաղաքական կայունության հիմնախնդիրները ՀՀ ԱԱ Գործընթացում բավականաչափ ուսումնասիրված չեն, սակայն հայ գիտնականներ Գ. Բեռյանը, Գ. Հարությունյանը, Ա. Ենգոյանը, Է. Հարությունյանը, Լ.Շիրինյանը, Ա.Աթանեսյանը, Ա.Մարկարովը, Խ.Գալստյանը²⁴ մասնակիորեն անդրադարձել են կայունությանը՝ կուսակցությունների տիպաբանության, սահմանադրությունից դեպի սահմանադրականության, անցումային հասարակությունների կերպափոխման, սոցիալ-քաղաքական փոխակերպումների զաղափարական հիմքերի, նոր աշխարհակարգի կայացման գործընթացի, հետխորհրդային կերպափոխման համատեքստում կիսամախազահական կառավարման ձևի, քաղաքական բանակցությունների ուսումնասիրման ժամանակ:

Ազգային անվտանգության հասկացությանը և ապահովման առանձնահատկություններին է անդրադարձել նաև Ա. Լ. Շահգելյանը²⁵:

ՀՀ-ում ընտրանում որպես քաղաքական կայունության հիմնական ցիվիլիզացիոն դերակատար դիտարկել է Մ. Մարգարյանը՝ միաժամանակ «անցում-համախմբում» հրաքայտի շրջանակներում ուսումնասիրելով քաղաքական ընտրանու գործառնման առանձնահատկություններն ու օրինաչափությունները²⁶: Քաղաքացիավարական ժողովրդավարության հաստատման նկատառումներով կայունությանն անդրադարձել է նաև Ա. Ալեքսանյանը²⁷:

²²Տե՛ս Քոթանջյան Հայկ Ս. Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում, Եր., ՀՀ ՊՆ Գ. Կանանյանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2008; Քոթանջյան Հայկ Ս. Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմնուղեցիկ / Գ. Ս. Քոթանջյան, Եր., ՀՀ ՊՆ Գ. Կանանյանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2010, Քոթանջյան Հայկ Ս. Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում-Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս-Աֆղանստան, Եր., ՀՀ ՊՆ Գ. Կանանյանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2009;

²³Քոթանջյան Հ. Ս. – Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում. – Եր.: ՀՀ ՊՆ Գ. Կանանյանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2008, էջ 301-302

²⁴Տե՛ս Հարությունյան Գ. Գ. Սահմանադրությունից՝ սահմանադրականություն, Եր., Նժար, 2004; Հարությունյան Գ. Գ. Սահմանադրական մշակութ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Եր., Նժար, 2005; Բեռյան Գ. Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը, Եր., «Վան Արյան», 2002; Ենգոյան Ա. Պ. Идеологические основы социально-политических трансформаций в постсоветской Армении / Отв. ред.: К. А. Мирумян.- Եր.: Изд-во РАУ, 2011; Հարությունյան Է. Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ: Պատ. խմբ. Ա. Ա. Գոլսեփյան, Եր., ԵՊՀ, 2000; Բեռյան Գ. Публичная политика и технологии современной политической риторики // Бюллетень Научно-образовательного фонда Нораванк, N. 10 (16), 2005; Բեռյան Ա., Угрозы информационной безопасности РА: Трехуровневый анализ. Стратегия развития. О некоторых проблемах национальной безопасности.- Եր.: НОФ Нораванк, 2010; Маркаров А. А., Полупрезидентализм в контексте постсоветской трансформации. Է.: Изд.-во ЕГУ.- 2008; Գալստյան Խ., Քաղաքական բանակցություններ. Տեսություն և պրակտիկ.- Եր.: Վան Արյան, 2007:

²⁵Տե՛ս Շահգելյան Ա. Ազգային անվտանգություն. հասկացությունը, ելույթներ, ձևավորումը, պռանձնահատկությունները, Եր., «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2003:

²⁶Տե՛ս Մարգարյան Մ. Կառավարման համակարգը Հայաստանում. ինստիտուցիոնալ կարգը և հիմնախնդիրները, ԱՂՀՀ, Եր., 2001; Մարգարյան Մ. Քաղաքացիավարական (ցիվիլիզացիոն) բյուրոկրատիան որպես ընտրանի, ԵՊՏԻ Քանթեր 3 (6), «Տնտեսագետ» հրատ., 2005; Մարգարյան Մ. Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Հայաստանի հրապարակությունում, Եր., «Պետական ժողովրդություն» հրատ., 2006; Մարգարյան Մ. Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնախնդիր: Պատասխանատու խմբագիր Գ. Հ. Սաֆարյան, Եր., «Պետական ժողովրդություն», 2004; Маргарян М. М., Арутюнян А. Э., Маргарян М. Г., Особенности обеспечения безопасности публичной политики в Республике Армения.- сборник материалов, X Международной научно-практической конференции, Система ценностей современного общества, Часть 1, Новосибирск, 2010:

²⁷Տե՛ս Ալեքսանյան Ա. Ցիվիլիզացիոն դեմոկրատիա, Եր., Երևանի համալս. հրատ., 2005; Ալեքսանյան Ա. Սոցիալական գործընկերությունը քաղաքացիավարական սոցիալական պատասխանատվության համակարգում, Եր., ԵՊՀ ՔԱՆԲԵՐ, 132.6, 2010; Ալեքսանյան Ա. Արևմտյան ժողովրդավարությունների քաղաքական համակարգեր. Տեսություն և արդիականություն: Ուսումնական ձեռնարկ, Եր.: «Վան Արյան», 2009:

ՀՀ-ում քաղաքական կայունության ապահովման համակողմանի ուսումնասիրման համար օգտվել ենք նաև ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունից²⁸ և ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգից²⁹, ինչպես նաև համապատասխան համացանցային կայքերից³⁰:

Չնայած բազմաբովանդակ մասնագիտական գրականության առկայությանը՝ քաղաքական կայունությունը, որպես ՀՀ ազգային անվտանգության ապահովման գործոնի, բավարար չափով ուսումնասիրված չէ՝ պայմանավորված ցանցային կառավարման արդիականացման դինամիկայում ինչպես պատրաստվածության և մարզինալության կանխման, այնպես էլ լեգիտիմության քաղաքակրթական փոխակերպումների համատեքստում քաղաքացիավարական կրթության և անվտանգության մշակույթի գործառնման հրամայականներով:

Գիտական նորություն: Ընտրված հիմնախնդրի բազմաշերտությունը ենթադրում է քաղաքական կայունության և ՀՀ ազգային անվտանգության ապահովման քաղաքականության համակարգված ուսումնասիրում՝ քաղաքակրթական երկխոսության ցանցային ընդարձակման տիրույթներում: Ատենեսյանություն մեջ փորձ է արված վերլուծել քաղաքական կայունության հիմնախնդիրները՝ շեշտադրելով ՀՀ ազգային անվտանգության ապահովման առանձնահատկությունները ցանցային կառավարման պայմաններում: Ըստ այդմ արձանագրել ենք գիտական նորությամբ պարունակող հետևյալ արդյունքները.

1. Քաղաքական շուկայի արդիականացման հետևանքով քաղաքական դերակատարների փոխհարաբերությունները ՀՀ ազգային անվտանգության ապահովման գործընթացում բազմափուլ և աստիճանակարգային գործունեությամբ: Նման տարածական բազմափուլությունը հնարավորություն կտա ՀՀ-ին բնականոն արդիականացնել քաղաքական համակարգի ինստիտուտներն ու պատասխանել ազգային անվտանգությանն ուղղված ներքին ու արտաքին սպառնալիքներին:

2. ՀՀ-ում ազգային անվտանգություն ապահովելու համար անհրաժեշտ է կարևորել կայունության և ժողովրդավարության որակի միջև եղած կապը՝ որպես արդի աշխարհում շարունակական ժողովրդավարության հաստատման ռազմավարական հիմնախնդիր (ժողովրդավարություն վերկից):

3. ՀՀ-ում քաղաքական կայունության-անկայունության համակարգաստեղծ սկզբունքների ներդրման նկատառումներով ԱԱ կառավարումը՝ որպես ռազմավարություն, ենթադրում է ինստիտուցիոնալ համակարգի պլուրալիստական նորարարացում՝ քաղաքական զարգացման ճգնաժամների մերժման ակնկալիքով: Անհրաժեշտ ենք համարում շեշտադրել, որ նմանօրինակ քաղաքական գործունեությունը ՀՀ-ում պետք է հավասարապես ներդրվի և գործառի կենտրոն-ծայրամաս արդիականացման տիրույթներում:

4. ՀՀ-ում ազգային շահի և նպատակի համադրումը պատմության հուլովություն հասարակական պահանջումներին, ակնկալիքներին և պատկերացումներին անբողոքություն է, որը ենթադրում է ռազմավարական անվտանգ ապագայի ապահովում և արդյունքի կառավարում՝ դառնալով քաղաքական կայունության էկոլոգիայի ուղենիշ: Վերոնշյալը պարբերաբար կարդիականացնի ՀՀ ԱԱ քաղաքականությունը՝ մերժելով «սոցիալական լողացող միավորներ» հաստվածային գործունեությունը:

5. ՀՀ-ում քաղաքացիավարական ինքնակազմակերպված ժողովրդավարություն իրականացնել դեմարտիայի սկզբունքներով, որը հնարավորություն կընձեռի արդիականացնել քաղաքական գործունեությունը՝ զուգամիտելով նրա սահմանադրական և բարոյաէթիկական արժեքաբանությունը:

²⁸Տե՛ս Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն (ՀՀ Նախագահի հրամանագիր, 2007, ՆՀ-37-Ն), ՀՀ ՊՆ ԱՌՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2007:

²⁹Տե՛ս Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ, 26 հունիսի 2009 թվականի ՆՀ-97-Ն:

³⁰Տե՛ս www.gov.am; www.parliament.am; www.president.am:

6. ՀՀ-ում քաղաքական կայունության ապահովման գործընթացում որոշիչ է միջին խավի շերտերի կայացվածության մակարդակը, առանց որի անհնար է դիտարկել ազգային շահի արդիականացումը՝ իր սոցիո և էթնոմշակութային առանձնահատկություններով: Առանց միջին խավի բազմաբնույթ շերտերի անմիջական ու գործուն ներգրավվածության ՀՀ ԱԱ գործընթաց ազգային շահի արդիականացումը կլինի հատվածային, իսկ համազգային նպատակները կփոխարինվեն նեղ խմբային, կուսակցական, տեղային կամ էլ անհատական նկրտումներով՝ առաջացնելով փոխհամաձայնեցված խմբիչխանություն:

7. ՀՀ ԱԱ նորարար դերակատար է դիտարկված ՀՀ-ԼՀՀ-Սփյուռք համագործակցության հիմքում դրված «Հայկական աշխարհ»-ը: Այս պարագայում ժամանակի մարտահրավերներին դիմակայելու ակնկալիքով անհրաժեշտ է քաղաքացիավարական կրթություն (civilarchic education), որը հնարավորություն կտա ինտեգրվել տարածաշրջանային և գլոբալ իրողություններին, և որպես «ինքնորոշված մարդ»՝ ապահովել ազգային անվտանգություն:

8. ՀՀ-ում քաղաքական անկայունության ռիսկերի նվազեցման նկատառումներով զարգացնել համախմբում հարացույցը՝ պատրաստելով տոգորված մարզի-նալների անպատասխանատու գործողությունները կանխարգելելու նպատակով արդիականացնել սոցիալական գործընկերությունը:

9. ՀՀ քաղաքական կայունության և կայուն զարգացման փոխհարաբերությունների արդիականացման և ԱԱ գործընթացում իրականացնել շարունակական ժողովրդավարություն հետևյալ բանաձևով՝

«մրցունակ մասնակցություն» + «լեզվափոխ կայունություն» = «ազգային անվտանգության ապահովման մշակույթ»

Աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը: Սույն ատենախոսության տեսական նշանակությունն այն է, որ աշխատանքի շրջանակներում առաջ են քաշվել մի շարք նոր հարցադրումներ, որոնք վերաբերում են քաղաքական կայունությանը՝ որպես ՀՀ ազգային անվտանգության ապահովման գործոնի: Ներկայացված են «շարունակական ժողովրդավարություն», «լեզվափոխ կայունություն», «սոցիալական լողացող միավորներ», «իշխանության լեզվափոխության ապահովման մշակույթ», «քաղաքական կայունության էկոլոգիա» հասկացությունները:

Կիրառական տեսանկյունից աշխատանքը արժևորվում է նրանով, որ կատարված վերլուծությունը հնարավորություն կտա փորձագետներին և անվտանգության քաղաքականության, ինչպես նաև շարունակական ժողովրդավարություն ապահովող դերակատարներին նորարարացնել իրենց գիտելիքների՝ մշակելով կայուն անվտանգության ռազմավարություն: Ցանցային կառավարման հաստատման գործընթացում ՀՀ-ում ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրների շուրջ կատարված վերլուծություններն ու եզրահանգումները կարող են օգտագործվել քաղաքական գիտության քաղաքական գործընթացներ և ինստիտուտներ, քաղաքական մարքեթինգ, ազգային անվտանգության հիմնախնդիրներ, քաղաքական գլոբալացում, քաղաքական հերձնենևտիկա գիտաճյուղերի դասավանդման ընթացքում, ինչպես նաև ընտրովի դասընթացների ծրագրեր նախապատրաստելիս: Այն օգտակար կարող է լինել նաև քաղաքական վերլուծաբանների, փորձագետների, քաղաքական գործիչների և դիվանագետների համար:

Ատենախոսության փորձաքննությունը: Աշխատանքը քննարկվել է և հրապարակային պաշտպանության է երաշխավորել ԵՊՀ «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» և «Քաղաքական գիտության պատմության և տեսության» ամբիոնների ղեկավարները:

Ատենախոսության հիմնարար դրույթները հեղինակի կողմից ներկայացվել են «Ներկայացուցչական դեմոկրատիայի զարգացման հեռանկարը և ընտրական գործընթացները Հայաստանում» նվիրված գիտաժողովում (2005), «Ժամանակակից հասա-

րակության արժեքային համակարգը» միջազգային X գիտակիրառական կոնֆերանսում (Նովոսիբիրսկ, 2010), ինչպես նաև «Քաղաքացիական հասարակությունը Հարավային Կովկասում» խորագրով միջազգային կոնֆերանսում (Երևան, 2008): Հեղինակը մասնակցել է «Նորավաճ» գիտակրթական հիմնադրամի և ՀՀ Գիտության պետական կոմիտեի կազմակերպած «Ազգային անվտանգության հիմնախնդիրները» խորագիրը կրող ամառային դպրոցին (2010թ. հուլիս, Երևան):

Ատենախոսության որոշ դրույթներ ներկայացվել են «Օրենսդրական բարեփոխումները կերպափոխող հասարակություններում» վերապատրաստման ծրագրում (Կահիրե, 2011):

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը շարադրված է 182 համակարգչային էջի վրա՝ բաղկացած ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և զրականության ցանկից: Աշխատանքում առկա են նաև հավելվածներ:

Ներածության մեջ հիմնավորվում են հետազոտվող թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, գիտական նորությունն ու պաշտպանության դրված հիմնական դրույթները: Ներկայացված են ատենախոսության տեսական և կիրառական մշակակութային, հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտն ու առարկան, ինչպես նաև մեթոդաբանությունը:

Ատենախոսության «Քաղաքական կայունության հիմնախնդիրը քաղաքական համակարգի արդիականացման գործընթացում» խորագրով երեք ենթագլուխներից բաղկացած առաջին գլխում դիտարկված է քաղաքական կայունությունը, որի միջոցով բացահայտվում, վերլուծվում և կանխատեսվում է քաղաքական համակարգի ինստիտուտների արդիականացման գործընթացը՝ ազգային անվտանգության ապահովման համատեքստում:

Առաջին «Քաղաքական կայունությունը՝ որպես համալիր արդիականացման ամբողջություն» ենթագլխում ատենախոսը համակարգված ուսումնասիրում է «արդիականություն» հասկացության քաղաքակրթական և ինստիտուցիոնալ չափումները՝ քաղաքական համակարգի էվոլյուցիոն բարդացման գործընթացում: Ելակետ ընդունելով արդիականացման հայեցակարգերի տեսաբաններ Կ. Մարքսի, Ա. Թոքսթիլի, Մ. Վեբերի, Վ. Պարետոյի և Թ. Պարսոնսի կողմից մշակված փոփոխության սկզբունքները՝ ատենախոսությունում արդիականացման գործընթացում տեղի ունեցող բազմաչափ փոփոխությունները ներկայացված են ավանդական-արդիական արժեքների երկճյուղումների հիման վրա:

Քննադատելով գծային զարգացումը՝ ենթագլխում կարևորված է Ս. Լիփսեթի, Դ. Ալպտերի, Ա. Հանթինգթոնի «համատեքստային» և «ինստիտուցիոնալ» մոտեցումները, որոնց տիրույթներում քաղաքական արդիականացումը դիտարկված է որպես տարաբնույթ բարեփոխումների, հեղափոխությունների, պետական հեղաշրջման, ընտրությունների և սահմանադրական փոփոխությունների բազմաչափ գործընթաց:

Այս համատեքստում «անցում-համախմբում» հարացույցի շրջանակներում քաղաքական կայունությունը ուսումնասիրվում է արտածին (Ա. Հանթինգթոն) և ներծին (Խ. Լինց) գործոնների հիման վրա:

Փաստորեն քաղաքական կայունությունը՝ որպես համալիր արդիականացման ամբողջություն, ենթադրում է նոր ձևավորված քաղաքական համակարգի հարահոս ադապտացիա՝ շարունակական ժողովրդավարացում տրամաբանությամբ: Այլապես ավանդական հասարակությունից արդիականի անցման արդյունքում հասարակություններն ընկղմվում են քաղաքական զարգացման ճգնաժամների մեջ, իսկ ժողովրդավարացման գործընթացներն ունենում են ոչ միայն վերընթաց, այլև վարընթաց բնույթ:

Բազմաչափ փոփոխությունների իրականացման գործընթացների վերլուծության ժամանակ ատենախոսը կարևորում է քաղաքական շուկայի արդիականացումը, որի միջոցով տեղի է ունենում քաղաքական դերակատարների՝ ընտրողների, թեկնածուների, կուսակցությունների (կառավարող և ընդդիմադիր) փոխհարաբերությունների կերպավորում: Եթե «նոր ժողովրդավարների» առաջին սերունդը բազմաչափ փոփոխություններ էր առաջարկում միայն ազատականացման սկզբունքով, ապա մարքեթինգային հետազոտությունների օգնությամբ բացահայտված քաղաքական ծառայությունների պահանջը փոխեց առաջարկի որակը՝ «անցում-համախմբում» հարացույցի գործառնման շրջանակներում:

Երկրորդ՝ «Ազգային անվտանգության ապահովման արժեքային բազմաչափությունը» ենթագլխում դիտարկված է, արդի մարտահրավերների ազդեցությամբ պայմանավորված ազգային անվտանգության ապահովման արժեքային բազմաչափությունը՝ որպես ինստիտուտների կամ արարողակարգերի միջոցով անորոշությունների կարգավորման և սպառնալիքների բացահայտման, կանխար-

գելման, չեզոքացման, հակադարձման, վերացման և կանխատեսման գործընթաց: Այդ բազմավեկտոր արժեքաբանության տիրույթներում ատենախոսը, ազգային անվտանգությունը ուսումնասիրելով շարունակականության տեսքով, «գիտավերլուծական» հարացույցի միջոցով համադրել է «կոշտ» (պետականակենտրոն) և «փափուկ» (քաղաքացիական) մոդելները: Այդ մոդելների գործառնումը դնելով քաղաքական համակարգի ադապտացիայի հիմքում՝ կարևորված է ԱՄՆ ժամանակային բաղադրիչը, որն իր կարծաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքներով ձևավորում է այն պարուրային ժամանակը, որի միջոցով փաստում է անվտանգության ապահովման գործընթացի գծային և հատվածային բնույթը: Ատենախոսը շեշտում է, որ «անցում-համախմբում» հարացույցի գործառնման միջոցով հնարավոր է արդիականը, ավանդականի հետ արդյունավետ համադրելով, կանխել քաղաքակրթական իմաստավորված անվտանգության տարածությունը սպառնացող վտանգից և տրոհումից: Արդյունքում այդ գործընթացը ենթադրում է սոցիալական շերտերի պահանջումներին էվոլյուցիա և անձի սոցիալականացում, որն ընթանում է գիտակցված կարիքի բացահայտման, վերլուծման և կառավարման հայեցակարգի շրջանակներում:

Ինչպես գրում է քաղաքական գիտությունների դոկտոր զեներալ-մայոր Հայկ Սարգսի Քոթանջյանը. «Վերջին տարիներին ի հայտ են եկել մի շարք երևույթներ, որոնք, իբրև միջազգային հարաբերություններ ձևավորող գործոններ, ներազդում են միջազգային անվտանգության կառույցների ու ռազմաքաղաքական ուժերի վրա: Այդ երևույթների վտանգավորությունը պայմանավորված է նրանց համընդգրկուն համաշխարհային բնույթով»:

Ատենախոսը փաստել է, որ նոր աշխարհակարգի հաստատման տրամաբանությունը զարգացող ծայրամասերին հնարավորություն է տալիս մրցունակ մասնակցության միջոցով դառնալ համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացման ցանցային (տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքական, տեղեկատվական) համագործակցության լիիրավ անդամներ: Որպես այդպիսին գործառնում է կոպենհագենյան դպրոցի տեսաբաններ Յոհան Գալթունգի, Բարրի Բուգանի, Օլե Վեյերի անվտանգության քաղաքականության մշակման ընդլայնված օրակարգը, ինչն էլ ընդարձակեց անվտանգության մշակույթի բովանդակությունը:

Անվտանգության կառավարման (security governance) արդիականացման և զարգացման հրամայականների կանխատեսմամբ, քաղաքականության բոլոր ոլորտներում անվտանգության դերակատարների միջև կենսական կարևոր շահերի փոխգործակցության կարգի միջոցով ձևավորում է անվտանգության համալիր (security complex): Այն անդրազգային տարածաշրջան է, որը, ընդգրկելով անվտանգության մասին կայուն պատկերացումներ և կենսական կարևոր շահերի փոխներգործության կարգ ձևավորած երկրներ կամ դաշնություններ, նպաստում է անվտանգության համայնքի (security community) կայացմանը և արժեքների ընդհանրության հիման վրա կարգավորում է դերակատարների վարքը: Փաստորեն անվտանգության համակցության հիմքի վրա «Մեծ ութնյակի» (G8) և «Մեծ քսանյակի» (G20) երկրները անվտանգության պրակտիկայի (security practice) և անվտանգության մուլտիանալիզի (security identity) տիրույթներում ձևավորում են «անվտանգության տարածական պատկեր (security spatial image)» ապահովելով ԱՄՆ արժեքային բազմաչափություն:

Նմանօրինակ մոտեցման պարագայում էլ նոր ձևավորված գլոբալիստիկայի (Ռոբերտսոն) շրջանակներում շեշտվեց «փափուկ» և «կոշտ» անվտանգությունների դերակատարների փոխհարաբերությունների զարգացման առանձնահատկությունները՝ որպես անվտանգության ոլորտում բաց աշխարհագրության, կառավարման ցանցային և հորիզոնական ձևերի տարածման համագործակցության, վարչաքաղաքական հարաբերությունների ցանցավորման, ինքնիշխանության և անկախության գերակայության, սահմանների ամրապնդման, պետության իմիջի արդիականացման համակարգ:

Երրորդ՝ «Քաղաքական կայունության և անկայունության համակարգաստեղծ սկզբունքները» ենթազխում հիմք ընդունելով ժողովրդավարացման «երրորդ ալիքի» տեսաբաններ (Ս. Հանթինգթոնի, Ա. Պշկոսկու, Խ. Լինցի) դիտարկումները ուսումնասիրված են քաղաքական կայունության և անկայունության համակարգաստեղծությունը՝ ԱԱ գործընթացում: Ատենախոսի կարծիով քաղաքական կայունությունը հնարավորություն է տալիս քաղաքական համակարգին կերպափոխվել արտաքին և ներքին միջավայրերի ազդեցության ներքո՝ պահպանելով կառուցվածքային ու սոցիալական փոփոխությունների ընթացքը վերահսկելու կարողությունը: Տարբերակված են «միհիմալ», «մոբիլիզացիոն», «ժողովրդավարական» և «ինքնավար» կայունության տիպերը:

Ելակետ ընդունելով արդի քաղաքական զարգացումները՝ դիտարկված է անկայունություն ծնող «ազդեցիվ քաղաքական մասնակցություն» հասկացությանը (Ս. Հանթինգթոն), որը դրսևորվում է ընտրագանգվածի սպասումների հիասթափության, պահանջումնքների աճի, ինչպես նաև չբավարարված նկրտումների առկայության պարագայում: Այդ համատեքստում, որպես քաղաքական կայունության և անկայունության համակարգաստեղծ չափումներ, կարևորված են սոցիալական երկխոսության գերակայությունը, տնտեսական նորարարության բարձր մակարդակը, եկամուտների հավասարաչափ բաշխման ու հարկեր հավաքելու իշխանության հնարավորությունները, քաղաքական այլընտրանքների (ինչպես նաև՝ ընդդիմադիր) գոյությունը, քաղաքացիների լայն անդամակցությունը ինստիտուցիոնալացված քաղաքական կուսակցություններին և սոցիալական շարժումներին:

Նման իրավիճակում ԱԱ դերակատարները իրենց մրցունակ մասնակցությամբ փոխում են խաղի կանոնները՝ արդիականացնելով կայունության և ժողովրդավարության որակի միջև եղած կապը՝ որպես գլոբալ աշխարհում ժողովրդավարական արժեքների հաստատման ռազմավարական հիմնախնդրի և սոցիալական կյանքի անվտանգ գոյաբանականության գերակա արժեք:

Ատենախոսն այն կարծիքին է, որ քաղաքական կայունության ինստիտուցիոնալացման տիրույթ անհրաժեշտ է ներառել նաև Թ. Պարսոնսի, Է. Դյուրկհեյմի, Կ. Յունգի կողմից կարևորած սոցիալական զգացմունքները՝ «էթոսը»: Այս առումով ատենախոսությունում ներկայացված է քաղաքական կայունությունը՝ որպես որոշակի քաղաքական ժամանակի մեջ, սպասումների ռացիոնալացման և ադապտացման գործընթաց, հարահոս փոփոխվող իրականությանը նորարարացվելու կառավարության հատկանիշ, քաղաքական համակարգի ինստիտուտների հասունության և կազմակերպչական ունակություններ, քաղաքական ուժերին բնորոշ ընթացակարգային և գործառույթային համալիր փոփոխություններ, ազգային անվտանգության ապահովման գործոն:

Ատենախոսության «Քաղաքական կայունությունը և ՀՀ ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների հաղթահարման հիմնախնդիրները» խորագրով երկրորդ գլխում համակարգված ուսումնասիրված է քաղաքական համակարգի բնականոն արդիականացմանը պայմանավորված ժողովրդավարական քաղաքական կայունության արժեքաբանությունը: Վերջին «լավ կառավարման» սկզբունքների միջոցով հետամուտ է լինում շարունակական ժողովրդավարության՝ ազգային անվտանգություն ապահովելով «համախմբում» հարացույցի օգնությամբ:

Առաջին՝ «Քաղաքական կայունության և կայուն զարգացման փոխհարաբերությունները ՀՀ-ում՝ շարունակական ժողովրդավարության պայմաններում» ենթազխում դիտարկված են կերպափոխվող համակարգերի նորարարական հատկությունների կայուն զարգացումը ռազմավարական կայունության դերակատարների աշխարհայացքի, դիրքորոշման և գործունեության արժեքային կողմնորոշման տիրույթներում: Այս նկատառումներով էլ քաղաքական կայունության և կայուն զարգացման փոխհարաբերությունների իրատեսական գնահատման համար կարևորված են համակարգային, գործառույթային, աջակցության (իրավիճակային, ռազմավարական) գործոնները:

Հիմնավորված է, որ քաղաքական համակարգի շարունակական ժողովրդավարության գործընթացը հետամուտ է միջին խավի արդյունավետ գործառնանը՝ դեմարխիայի սկզբունքների հիման վրա: Կառավորող և բիզնես ընտրանիները, ինչպես նաև ընտրագանգվածը նպատակադրված կայուն զարգացմանը բնականոն արդիականացում են քաղաքական համակարգը՝ ցանկանալով զարգացման ճգնաժամերի հաղթահարմամբ նվազեցնել պատրանքային հեղափոխությունները, ահաբեկչությունը, խառնակախմբերի գործունեությունը և այլն: Դրանց հաղթահարման նպատակով դեմարխիայի գործունեության ոլորտները մեկնաբանված են նորովի՝ հոգուտ ցանցակառավարման արդյունքում ստեղծված ռազմավարական կայունության և կայուն զարգացման փոխհարաբերությունների քաղաքակրթական տարածության հումանիզացմանը:

Ատենախոսը, ելակետ ընդունելով Թ. Պարսոնսի, Գ. Ալմոնդի և Լ. Պայի քաղաքական համակարգի բնականոն արդիականացման, ինչպես նաև Ժ. Էյուլի քաղաքացու ժողովրդավարական գիտակցության կայացումը, տարբերակել է ռազմավարական կայունությունը և ենթահամակարգերին բնորոշ շարժման ռեժիմների (լինի դա ինստիտուցիոնալ դիզայն վարչակարգում, կուսակցական համակարգում կամ փոփոխություններ ընտրողների վերաբերմունքում) ալիքային կայունության անվտանգ քաղաքականությունը: Այս համատեքստում էլ համակարգի բնականոն արդիականացումը պատահական ընտրությունից խուսափելու համար ձգտում է ազգային անվտանգության՝ ապահովելով մրցունակ մասնակցություն, ապագայի կառավարում, տարածքային հավասարաչափ զարգացում, նվազագույն սպառողական զամբյուղի (ՍԱԶ) պարբերական վերանայում, շրջակա միջավայրի պաշտպանություն՝ իրականացնելով ռազմավարական հեռատեսության կառավարում: Նման համակարգային մոտեցումը արդարացված է, քանի որ գլոբալացման արդի փուլի մարտահրավերներին հավասարժեք պատասխանել հնարավոր է կայուն անվտանգության (static security) և ազգային մրցունակության ցանցային զարգացման կարևորումը՝ ռազմավարական կայունության միջոցով: Այս տրույթներում էլ ձևավորվում են քաղաքական կայունության և կայուն զարգացման փոխհարաբերությունների այնպիսի մեխանիզմներ, որոնք իրենց նորարարությամբ հնարավորություն են տալիս նորանկախացած պետություններին մասնակցել աշխատանքի միջազգային նոր բաժանմանը և ռազմավարական անվտանգության արդիականացման գործընթացին:

Երկրորդ՝ «Մարզինալությունը որպես ՀՀ քաղաքական համակարգի կայունության սպառնալիք» ենթազխում ուսումնասիրված է հասարակության մարզինալության կանխմանը միտված ժողովրդավարական համախմբման գործընթացը:

Ատենախոսի կարծիքով համախմբումը ենթադրում է երկրորդ սերնդի նոր ժողովրդավարների բազմաչափ այնպիսի բարեփոխումներ, որոնք հնարավորություն կտան ՀՀ-ին, արդիականացնելով ազգային «ես»-ի ինքնության քաղաքական ելությունը, հաղթահարել առաջին սերնդի ժողովրդավարների գծային բարեփոխումների արդյունքում առաջացած քաղաքական զարգացման (բաշխման, մասնակցության, շարժունակության, նույնականացման, լեգիտիմության) ճգնաժամերը: Մարզինալությունը արժեշահային համակարգի անհարկի տրոհվածության, սոցիալական բևեռվածության ու էթնիկական խտրականության, սահմանադրական թույլ մշակույթի արդյունքում առաջացած անձի օտարվածության, որպես քաղաքացի ինքնահաստատվելու և ինքնիրացվելու այլընտրանքային ուղիների դերային անորոշության արդյունք է: Ելակետային այս մոտեցմամբ էլ ատենախոսը Ռ. Պարկի դիտարկած մարզինալության տիրույթներ է ներառում քաղաքական պատրանքը (լատ. illusio): Որպես «ես»-ի հիվանդագին երևակայության, չարդարացված նկրտումների, մախամձի, խանդի և ապակառուցողական գործողությունների արդյունք՝ իրականության պատրանքային փոփոխությունները խոչընդոտում են կայունության հաստատմանը և սպառնալիք են ազգային անվտանգությանը: Պատրանքի մակարդակը պայմանավորված է այն ծնող պատճառների համակարգով, ինչպես նաև ճգնաժամերի հաղթահարմանն ուղղված անձի այն էներգիայով, որը կարող

է հաղթահարել կյանքի դժվարությունները, որի պայմաններում անկանխատեսելի ընթացք են ստանում հարաբերական անկախության մեջ գտնվող անձի բազմաշերտ ու բազմաբովանդակ ես-պատկերներն ու վարքագիծը:

Համակարգային ամբողջության մեջ դիտարկելով սոցիալական մարզինալությունը կերպափոխությունների գործընթացում ինքնությունը կորցրած և նոր ինքնության պատրանքային փնտրտուքի մեջ գտնվող «ես»-երի կարգավիճակ՝ ատենախոսը այն կարծիքին է, որ պատրանքային փոփոխությունների հորձանուտ ներքաշված էքնիկական, սոցիալական, մշակութային, տնտեսական, քաղաքական մարզինալություն կրող և արարող խմբերը, արագորեն փոխելով իրենց սոցիալական տարածությունը, անկայունություն և անորոշություն ստեղծելով՝ սպառնալիք են ՀՀ ազգային անվտանգությանը: Ատենախոսը համազված է, որ մարզինալությունը հատուկ է բոլոր հասարակություններին, սակայն որոշիչն այն ունիվերսալ արժեքների առկայությունն է, որոնց օգնությամբ ընդարձակվում է այլընտրանքային (սթրես, ժամանակ, արդյունք, նպատակ, կարիք և այլնի) կառավարման սոցիալական տարածությունը:

Այս առումով ուշագրավ է գլոբալ տարածություններում ձևավորված ժամանակակից Սփյուռքը, որը, հաղորդակցական գործունեության դրսևորման եռաչափ ձև է «Սփյուռք-հայրենիք», «Սփյուռք-որդեգրված հասարակություն», «Սփյուռք-միջազգային (միջկառավարական) կազմակերպություններ»: Փաստորեն, գլոբալացման պայմաններում սոցիալական տարածության ընդարձակման հետևանքով մարզինալությունն այսօր տարաբնույթ սոցիոմշակութային փորձի սահմանագծերում մի կողմից «ես»-ի բախումնաձին մենախոսության, մյուս կողմից՝ հանդուրժողական երկխոսության միջոցով նրա ինքնակերպափոխման և ինքնարդիականացման արդյունք է: Ատենախոսը համոզված է, որ իրական աշխարհի պատրանքային ընկալումն, որպես փոփոխության ձգտում, հնարավորություն է տալիս ձևավորել նոր որակի մարդ, որը դիմանիկ հասարակության ստեղծմանը փոխում է իշխանության իրականացման մշակույթի արժեքային համակարգի, կյանքի որակի և մակարդակի ընկալումների տեխնոլոգիան:

Ելակետ ընդունելով հետազոտողներ Օ'Դոնելի և Ֆ. Շմիտտերի մարզինալության՝ որպես քաղաքական կայունության սպառնալիքի կանխման մոտեցումները ատենախոսը տարբերակել է ժողովրդավարական անցման և համախմբման արժեքային համակարգի քաղաքական էության արդիականացման գործընթացը: Եթե անցման ժամանակ հաստատված ինստիտուտները գործառնվում են գծային ազատակացման խաղի կանոնների հանաձայն, ապա համախմբումը ենթադրում է ընտրությունների ինստիտուտի միջոցով քաղաքական շուկայի արդիականացում:

Այս համատեքստում ատենախոսն հիմնավորել է «մարզինալ արդիականացում» հասկացությունը փաստարկելով որ զարգացող երկրների տնտեսական և քաղաքական անկայուն իրավիճակը անհամատեղելիություն առաջ բերելով տվյալ հանրույթի անցյալի, ներկայի և ապագայի միջև, ստեղծում է ոչ միայն քառս ծնող աղետներ, այլև խառնածին մշակութային միջավայր, որտեղ «խմբի իշխանության երկաթյա օրենքի (Ռ. Սիլենս)» միջոցով տրոհված խառնակախմբերը, ընդարձակելով իրենց գործունեության սոցիալական բազան, մշակում են մարզինալ արդիականացման նոր մեխանիզմներ:

Ատենախոսի կարծիքով ՀՀ-ում նման մեխանիզմների մերժման համար անհրաժեշտ է, որ շարունակական ժողովրդավարության հաստատման գործընթաց ներդնել «լավ կառավարման» (good governance) սկզբունքները՝ մասնակցություն, իրավունքի գերակայություն, թափանցիկություն, համագործակցություն, արդարություն, արդյունք և գործ, հաշվետվություն և ռազմավարական հեռատեսություն: Լավ կառավարումը, բարձրացնելով կոռուպցիայի և աղքատության դեմ մղվող պայքարի արդյունավետությունը, ընդլարձակում է ժողովրդավարական համախմբման ունիվերսալ տարածքը և նվազեցնում մարզինալությունը որպես ՀՀ ազգային անվտանգության սպառնալիք:

Երրորդ՝ «Լեզվատնություն քաղաքակրթական փոխակերպումները՝ որպես ՀՀ կայուն անվտանգության ռազմավարություն» ենթազգային իրականացված է Լեզվատնության համակարգային ուսումնասիրում՝ սոցիալական կապերի այլընտրանքային զարգացումների և ռազմավարական ապագայի գիտելիքների նորարացման տիրույթներում:

Որպես սոցիալ-հոգեբանական երևույթ՝ Լեզվատնությունն արդիականացող հասարակություններում հնարավորություն է տալիս շեշտել քաղաքակրթական փոխակերպումները, որոնք, բացահայտելով մասնակցային քաղաքական մշակույթի և բանավեճի, բանակցության ինստիտուտների ձևավորման շուրջ ծավալված այլընտրանքներ, ներառում են ներքին կայունություն, անվտանգություն, հանդուրժողականություն, բարեկամություն, որոնք էլ հնարավորություն են տալիս հին իրողությունը և գիտելիքները կողմերին ինքնակա ընդունել նորը՝ Լեզվային խաղերի կիրառությամբ (Ժ. Լիտտար): Լեզվատնության քաղաքակրթական փոխակերպումը որպես գործընթաց ընդունելը հնարավորություն կտա հայ հասարակությանը արդիականացնել իշխանության իրականացման մշակույթը և՛ սահմանադրափրավական, և՛ բարոյահոգեբանական կարգի մեջ:

Կարևորված է Լեզվատնության համապատասխանելիությունն իրավունքի և արդարության մասին մարդկանց գաղափարներին, նրանց հիմքում ընկած արժեքներին ու նորմերին, ինչպես նաև ընտրագանգվածի - ընտրանու - լիզբության ինստիտուտների միջև առկա այն փոխհարաբերություններին, որոնց վրա ձևավորվում է քաղաքական իշխանությունը:

Համադրության մեջ դիտարկված են Լեզվատնության քաղաքակրթական փոխակերպումների Մ. Վեբերի Դ. Իստոնի և Մ. Լիփսեթի մոտեցումները՝ կարևորելով քաղաքական ընտրանու իրականացրած իշխանության նկատմամբ ունեցած երկարաժամկետ և կարճաժամկետ աջակցությունը: Վերջինս համակարգը գեր է պահում անկայունությունից (ճգնաժամից, քառսից, ընդվզումներից, ահաբեկչությունից), եթե կայուն անվտանգության ապահովման նկատառումներով նրա առանձին կառուցվածքային տարրերը (կուսակցություն, քաղաքական լիզբո, ընտրանի), համախմբելով իրենց ուժերը, կկարողանան կերպափոխվել Լեզվատնության արժեքային համակարգը՝ գաղափարախոսություն, կառուցվածք և անձնական մակարդակներում (Դ. Իստոն):

Ատենախոսը, Լեզվատնության քաղաքակրթական փոխակերպումներն ուսումնասիրելով որպես կայուն անվտանգության ռազմավարություն, փաստարկում է անվտանգության քաղաքականության մշակույթի վերաբերյալ կուտակված գիտելիքների առկայության անհրաժեշտությունը՝ պայմանավորված ազգային ոգին արտահայտող Լեզվատնությունության, իմացաբանական, ճանաչողական, արխիվային, բանակցային, տեղեկատվահաղորդակցական մեխանիզմների արդիականացմամբ:

Նմանօրինակ մոտեցմամբ հիմնավորված է ժողովրդավարական համախմբումը, որպես նրցակցող կողմերի միջև խաղի կանոններ սահմանող յուրօրինակ պակտի կնքում: Այդ նկատառումներով իրականացվում են «կուլիցիաներ ենթադրող ընտրությունները»: Զննարկվող համախմբման տիրույթներում ընդարձակվում է կայուն անվտանգության սոցիալական տարածությունը՝ մեծացնելով «բարեփոխումներ վերևից» զարգացման հեռանկարները: Մինչդեռ ժողովրդավարական անցումը հեղափոխական գործողությունների ճանապարհով՝ «բարեփոխումներ ներքևից» գաղափարի գալթակղությունը, ծնում է «նոր ժողովրդավարներ», որոնք էլ նվազագույնի են հասցնում ժողովրդավարական կայունություն հաստատելու հնարավորությունները: Սիս այս նկատառումներից ելնելով էլ՝ ՀՀ-ում 2003թ.-ից սկսած ՀՀ 2007թ. Ազգային ժողովի ընտրությունները դիտարկենք որպես համախմբման ձևավորման փորձ:

Ուստի ՀՀ կայուն անվտանգության ռազմավարության վրա Ղարաբաղյան հիմնախնդրի արդարացի լուծման, ներքին և արտաքին սպառնալիքներին դիմակայելու հրամայականով պայմանավորված՝ անհրաժեշտ է ազգային անվտանգություն ապահովել ՀՀ-ԼՂՀ-Սփյուռք բազմակերպ տիրույթներում: Որպես կայուն անվտանգության ռազմավարության դերակատարներ՝ նրանցից յուրաքանչյուրը

մասնակցում է ազգ-պետության, սոցիալ-տնտեսական, սոցիալ-դասային, էթնոմշակութային գործոններ և կառուցվածքներ կազմավորող գործընթացներին:

Ատենախոսության «ժողովրդավարական կայունությունը ԳՅ ազգային անվտանգության ռազմավարության իրականացման համատեքստում» խորագրով երրորդ գլխում դիտարկված է համընդհանրացման արդյունքում ինչպես ինքնության ընդհանրության, այնպես էլ ազգային անվտանգության ապահովման նկատառումներով քաղաքացիավարության և համագործակցության մշակույթում ինստիտուցիոնալ գործունեության հունանիզացման նորարացումը:

Առաջին՝ «Ազգային շահերի կերպավորումը՝ ԳՅ անվտանգության քաղաքականության ուղեմիջ» ենթազույգը նվիրված է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության արժեքային բազմաչափության տիրույթներում կայուն անվտանգության ապահովմանը: Ելակետ են ընդունված դեռևս 1993 թ.-ին ԵՄ-ի կողմից մշակված Կոպենհագենյան սկզբունքները, որոնք ԵՄ ինտեգրվող յուրաքանչյուր մասնակցից պահանջում են ունենալ ժողովրդավարական կայունություն (կայուն ժողովրդավարություն), ամբողջությամբ ապահովել մարդու իրավունքները, ունենալ գործող շուկայական տնտեսություն և ազգային օրենսդրությունը արդիականացնել ԵՄ-ի նորմատիվ-իրավական բազայի հիման վրա:

Ենթազույգում կարևորված է, որ ԳՅ ազգային անվտանգության ռազմավարության հիմնարար արժեքները՝ անկախություն, պետության և ժողովրդի պաշտպանություն, խաղաղություն և միջազգային համագործակցություն, հայապահպանություն, բարեկեցություն կոչված են արդիականացնելու ազգային շահը: Որպես գիտակցված պահանջումների համար նպատակդրված գործողությունների և հարաբերությունների ամբողջություն՝ ազգային շահը ԱԱ կառուցվածք է ներառում սպառնալիքներին դիմակայելու և հավասարակշռություն պահպանելու ուղիները: Շեշտադրված է նաև ԳՅ-ում միջին խավի կայացման սոցիալական անհրաժեշտությունը, որն իր նախաձեռնողական, նորարարական և մրցունակ մասնակցային հնարավորություններով նպաստում է ազգային ոգու նորարարացմանը: Նա կարող է դառնալ համապատասխան արժեքամակարգի կրող և տարածող՝ համապատասխան կազմակերպված ազդեցության դեպքում՝ հիմնվելով «ազգային ոգի և արևմտյան տեխնիկա» (Ս. Հանթինգթոնի)՝ փոխակերպվող հասարակությունների կայուն զարգացման բանաձևի վրա:

Այս գործընթացում էլ միշտ գերակա է երկու հիմնական նպատակ՝ քաղաքացիների անվտանգության ապահովում և պետության հզորության արդիականացում, որոնք էլ պետական իշխանության կողմից մշակված անվտանգության համագործակցային քաղաքականության իրականացման կարևորագույն կողմնորոշիչներն են: Իրենց սոցիալ-տնտեսական, մշակութապատմական, աշխարհաքաղաքական և այլ օբյեկտիվ հիմքերով ազգային շահերը որոշակի կերպով շրջանառված և գեներացված են: Դրանք որպես տեղեկատվահաղորդակցական գործընթաց դիտարկվում են՝ բիզնես-պետություն փոխազդեցությունների ինստիտուցիոնալ մակարդակում, որի ուղղվածությունը, ծավալը, շարժունակությունը և շերտավորվածությունը պայմանավորում է ազգային, պետական և հանրային շահերի զուգամիտումը:

Երկրորդ՝ «Քաղաքացիավարությունը որպես ԳՅ ժողովրդավարական կայունության հաստատման երաշխավոր» ենթազույգում դիտարկված է ազգային անվտանգության ապահովման գործընթացում քաղաքացիավարության դերը ԳՅ-ԼՂԳ-Սփյուռքում համագործակցության տիրույթներում:

Ենթազույգում դիտարկված է կիբերտարածություններում էթնիկական նույնականացման գործընթացի ունիվերսալ բնույթ, որը, որպես պետական հսկողության և միջամտության սահմաններից դուրս գործառնող իրականություն, նպաստում է ինչպես կայունության ապահովմանը, այնպես էլ անկայունությանը: Արդի դարաշրջանում տարբեր քաղաքակրթությունների միջև ծավալված արժեքային զուգամիտումները, բախումները և երկխոսությունները թե՛ իրական, թե՛ վիրտուալ տարածություններում ակնհայտ

են դարձնում, որ գլոբալ կառավարման համակարգի և գլոբալ քաղաքացիական հասարակության ձևավորմանը մրցակցային մասնակցություն ունենալու համար էթնիկական նույնականության օգնությամբ հնարավոր է ընդարձակել ազգային անվտանգության կիբերտարածականությունը: Այս իմաստով էլ ուշադրության է արժանի քաղաքացիավարական կրթության միջոցով ինչպես էթնիկական նույնականացման աղապտացվող արդիականացման ապահովման, այնպես էլ ունիվերսալ արժեքների հաստատման անհրաժեշտությունը:

Յեղիմակն այն կարծիքին է, որ ունենալով անվտանգ տեղաշարժվելու անսահմանափակ հնարավորություն, կիբերտարածական պայմանական լանդշաֆտներում կամ համացանցում գործող բլոգերում (համացանցային օրագիր) ազգային ինքնության նույնականացման «խառնարանում» հայտնվածները, որպես և՛ «սպառող», և՛ «մատակարար», համացանցային օրագրերի միջոցով շրջանառության մեջ են դնում ազգային անվտանգության ռազմավարության համար էական նշանակություն ունեցող տեղեկատվության որոշակի պաշար: Հայ ազգային ինքնության արդիականացման գերխնդիրը մրցունակ սերնդի ձևավորումն է՝ ազգապահպանման և քաղաքացիավարական արժեքների՝ քաղաքացիական գիտելիքների, քաղաքացիական հմտությունների, քաղաքացիական արժանիքների համադրմամբ:

Ժողովրդավարական կայունության պայմաններում հայ «Ես»-ը հնարավորություն է ստանում մասնակցել աշխատանքի միջազգային նոր բաժանմանը և ինքնության բնականոն արդիականացման միջոցով՝ որդեգրելով «Գիտությունը ուժ է» կարգախոսը: Վերոնշյալը հնարավորություն է տալիս պահպանել համակեցության կանոնները և, համագործակցելով տարաբնույթ «Ես»-երի հետ, նպատակամետ պատասխանել գլոբալ մարտահրավերներին: Այս առումով նոր արժեքային համակարգ որդեգրած ԳՅ կրթության ոլորտի արժատական փոփոխությունները կենսական նշանակություն ունեն երկրում քաղաքական կայունության՝ որպես ազգային անվտանգության գրավականի դիտարկման համար:

Ըստ հեղինակի՝ գլոբալացման գործընթացում կրթական համակարգի արդիականացումը առաջին հերթին ենթադրում է ոչ միայն նոր տեխնոլոգիաների ներդրում և բազմակողմանի մասնագիտական պատրաստվածություն, այլև՝ քաղաքացիավարական մշակույթ ունեցող ուսուցիչ, որն իր դիրքորոշմամբ բացահայտում է սերնդին ազգային շահերի բազմաչափության ընկալման անհրաժեշտությունը՝ հանուն ազգային անվտանգության ապահովման: Արդյունավետ կարող է լինել արդիականությունը ոչ թե որպես պատմական շրջան, այլ որպես դիրքորոշում դիտարկելու մոտեցումը (Ս. Ֆուկոն):

Նման քաղաքականությունը միաժամանակ հնարավորություն է տալիս մեծ Սփյուռք ունեցող ԳՅ-ին դառնալ մասնագետ կադրերի պատրաստման կրթական կենտրոն, որտեղ զուգամիտվում են գլոբալ, համազգային և տարածաշրջանային նշանակության նորարարության հիմնախնդիրները՝ գլոբալ անվտանգության ապահովման համատեքստում: Այսպիսի մոտեցումը կնպաստի բազմամշակութային հարաբերություններում գտնվող սփյուռքահայության ինքնության բնականոն և ներդաշնակ արդիականացմանը՝ ներգրավելով նրանց ազգային կրթական համակարգի նորարարացման գործընթացում:

Յեղիմակն համադրել է դեռևս Մեսրոպ Մաշտոցի կողմից մշակված «Հոգևոր Հայաստանի» և «Հայկական աշխարհի» ձևաչափերը, որոնք ինքնակազմակերպման ցանցային ձևերում ենթադրում են մրցունակ մասնակցություն: Արդյունքում նոր աշխարհակարգի կայացման գործընթացում էթնիկ «Ես»-ը իր անվտանգության նկատառումներով ընդգրկվում է գլոբալ հասարակություն, որը բավարարվում է «աշխարհի քաղաքացի» - «մարդու իրավունքներ», «հանդուրժողականություն», այսինքն՝ «բոլորը բոլորի հետ» երկխոսության միջոցով շեշտադրելով շահերի առավելագույն բավարարման տրամաբանությունը (Ֆարիդ Ջաբարիա):

Յեղիմանկ այն կարծիքին է, որ «Հայկական աշխարհի» կայացման տիրույթներում առաջնահերթ է դառնում և՛ ՀՀ-ի անդամակցությունը անդրազգային կազմակերպություններին, և՛ հայկական համազգային ցանցի ռեսուրսների օգտագործումը: Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության ամբողջական և արդյունավետ իրականացման, դրա շարունակական կատարելագործման ու պետական այլ մարմինների գործունեությունը համակարգելու նպատակով 2008 թ. հոկտեմբերի 1-ից ՀՀ կառավարության կազմում գործում է ՀՀ Սփյուռքի նախարարություն: Վերջինս, որպես գործադիր իշխանության հանրապետական մարմին, հանրապետության նախագահի ընդհանուր ղեկավարությամբ մշակում և իրականացնում է Հայաստանի և Սփյուռքի հետ կապերի ամրապնդման, ներգաղթին աջակցելու, պետական և հասարակական այլ մարմինների հետ համագործակցության ՀՀ կառավարության քաղաքականությունը:

ՀՀ Սփյուռքի նախարարությունը իրականացնում է բազմաբնույթ ծրագրեր՝ «Արի տուն», «Հայ կամավորների միություն», «Ղեպի Հայք» և այլն: Առանձնապես ուշագրավ է «Գիտելիքների փոխանցում Սփյուռքի հայրենակիցների միջոցով» (TOKTEN) ծրագիրը, որի նախաձեռնողն է Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ): Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացմանը այլ պետություններում ապրող իր հայրենակիցների միջոցով:

Երրորդ՝ «Համագործակցության մշակույթի հումանիստական էությունը որպես ժողովրդավարական կայունության ապահովման գործընթաց» ենթազխում դիտարկված է ժողովրդավարական կայունության ապահովման գործընթացի սոցիալ-քաղաքական, քաղաքակրթական, բարոյահոգեբանական էությունը՝ շեշտադրելով քաղաքացիական անվտանգության (civic կամ civilian security) և համընդգրկուն անվտանգության (comprehensive կամ overall security) ստեղծումը, ձևավորումը և կայացումը:

Մեկնաբանված է «մարդկային անվտանգություն» հասկացությունը որպես մարդկանց զոյատուտումը ապահովող հիմնական պահանջումներն ընդգրկող «համընդհանուր բարեկեցության» (social welfare) և «հանրային անվտանգության», «հումանիտար ինտերվենցիաների» գաղափարներով, որոնք էլ դրվում են «ես»-ի երկարաժամկետ զարգացման ռազմավարության հիմքում: Յեղիմանկ անդրադարձել է «անդր-պետական անվտանգություն» (transstate security) հասկացությանը, որը ենթադրում է տարբեր երկրների կառավարական և ոչ կառավարական ինստիտուտների փոխգործակցություն՝ ընդհանուր սպառնալիքներից պաշտպանվելու համար: Տեղեկատվական տեխնոլոգիաների և սպառողական մշակույթի զարգացման արդյունքում սոցիալ-քաղաքական փոխակերպումների ենթարկվող դերակատարները, իրենց կորպորատիվ շահերից ելնելով, նախապատվությունը տալիս են ազգային անվտանգության ապահովման փափուկ և կոշտ ձևերի զուգամիտմանը:

Ատենախոսն այն կարծիքին է, որ ունիվերսալ արժեքների հաստատման միջոցով բնության և բանականության եկոլոգիայի պահպանման համար համագործակցության մշակույթի հումանիստական բնույթը հնարավորություն կտա կերպափոխվող հասարակություններին ռացիոնալ պատասխանել արտածին և ներածին մարտահրավերներին: Ենթադրվում է, որ նոր հումանիզմը կընդարձակի ՀՀ կայուն զարգացման և համագործակցության մշակույթի ապահովման սոցիալական տարածությունը: Այդ նպատակի իրագործման համար անհրաժեշտ է մշակել հանրային, քաղաքական, պետական և գլոբալ կառավարման հումանիստական նպատակի ռազմավարություն:

Քաղաքական կայունության հաստատման բազմաչափությամբ, բազմավեկտորությամբ ու ժողովրդավարության որակի աճի անհրաժեշտությամբ պայմանավորված ատենախոսը նորովի է մեկնաբանել Հիրամի (HIRAMA – High Intensity Research and Management Association, Բարձր արդյունավետության հետազոտությունների և կառավարման միություն՝ ԲԱՀԱ) անվտանգության ապահովման ցանցային բուրգը:

Վերջինիս օգնությամբ համագործակցության մշակույթի հումանիստական էությունը ներառում է կենսասոցիալական սկզբունքները՝ ապակենտրոնացված աստիճանակարգություն, բազմադերային կառավարման դաշտ, հետևողական ուշադրություն: Սոցիալական ցանցի անդամների կենսաենթոցիան նպաստում է ինչպես բարոյահոգեբանական անվտանգ մթնոլորտի ստեղծմանը, այնպես էլ էթնիկական տարբեր պատկանելիություն ունեցող անհատների կայուն զարգացմանը: Կառավարման ապակենտրոնացումը սոցիալական ցանցի անդամների միջև հորիզոնական հարաբերությունների հաստատումը, խմբային լիդերների առկայությունը ռացիոնալացնում են առկա իրողություններին տրվող զննահատականները՝ կայունացնելով սոցիալական գործունեությունը: Հիրամի ցանցային կառավարման մոդելը այսօր արդյունավետ իրականացվում է և քաղաքական կայունության ապահովման, և՛ տարաբնույթ խմբերի առաջնորդների միջոցով անվտանգություն ապահովելու համար: Միայն այս դեպքում ՀՀ-ում կհաղթահարվեն քաղաքական զարգացման ճգնաժամները, կհաստատվի մարդկային իրավունքների տնօրինման և պարտականությունների մշակույթի (ՄԻՏՄԿ) արժեքային համակարգը, և ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու համար կձևավորվի կայուն զարգացման և անվտանգության ապահովման բարենպաստ ռեժիմ:

Որպես ամփոփում ընդունված է, որ պետական կառավարման աստիճանակարգության կառուցվածքում անհրաժեշտ է զուգամիտել լավ կառավարման սկզբունքները (մասնակցություն, թափանցիկություն, իրավունքի գերակայություն, արդարություն, սոցիալական երկխոսություն, սերունդների համերաշխություն, ռազմավարական հեռատեսություն, արդյունքի կառավարում) և Government Relations (GR) տեխնոլոգիաները՝ միտված կայունության և ազգային անվտանգության ապահովմանը:

«Եզրակացություններ և առաջարկություններ» մասում ամփոփված են ատենախոսության արդյունքները, որոնց հիման վրա կատարված են առաջարկություններ: Ստացված արդյունքներից հարկ է առանձնացնել հետևյալները.

1. Քաղաքական կայունության բնութագրիչը արդիականացվող քաղաքական համակարգի իրականացման տեխնոլոգիաների և կառավարման ցանցային և աստիճանակարգային փորձի համադրումն է, որը վերարտադրում, ազգակերտում և կառավարում են ԱՆԱ համակարգը՝ ապահովելով ժողովրդավարության որակ և կայուն զարգացում: Քաղաքական կայունության պայմաններում բացահայտվում, վերլուծվում, կանխատեսվում և ռազմավարական առումով ծրագրավորվում է քաղաքական համակարգի արդիականացման էվոլյուցիոն գործընթացները: Անվտանգության փափուկ և կոշտ մոդելների շրջանակներում մշակված ազգային շահի արդիականացումը ներառում է ապակենտրոնացված կառավարում, բազմադերային քաղաքական դաշտ, մրցակցային մասնակցություն և համագործակցային անվտանգության համակարգ (ՀԱՀ):

2. Պետությունը՝ իբրև քաղաքական համակարգի գերակա ինստիտուտ, քաղաքական կայունության և կայուն զարգացման փոխհարաբերությունների միջոցով շարունակական ժողովրդավարություն է իրականացնում և, որպես ինքնիշխանություն և գերիշխանություն իրականացնող միակ ինստիտուտ, ապահովում է ազգային անվտանգություն՝ կանխելով ներքին և արտաքին համաչափ ու անհամաչափ սպառնալիքները: Արդի տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների անմիջական ազդեցությամբ ինստիտուցիոնալ կայունությունը ներառում է զգացմունքներ, կրքեր, հակասական կերպարներ, նշաններ, երևակայություն, հավատ, հեղինակություն, սովորույթներ, ավանդույթներ և այլն: Վերջիններս, որպես ընդհանուր մշակույթի արժեքային-իմաստային բաղադրիչներ, ամբողջացնում են մարդու ռացիոնալ-նորմատիվ համակարգը: Արդյունքում ԱՆԱ գործընթացում գերակա է սոցիալական համակարգի և շրջակա միջավայրի միջև միջանկյալ համակարգերի ստեղծման միջոցով քաղաքացու «ես»-ի կերտումը՝ էրոսի ինստիտուցիոնալացում (Թ. Պարսոնս): Պետությունը, որպես անվտանգության ապահովման մոնոպոլ «ադմինիստրատոր», իր գործառույթները իրականացնելիս համագործակցում է՝ ա) ըստ անվտանգության մակարդակի - սուբստանցիոնալ և

անդրազգային ինստիտուտների, բ) ըստ անվտանգության ձևերի – ոչ պետական դերակատարների հետ: Այս տիրույթներում ԱԱ Կայմանավորված է ինչպես աշխարհա- քաղաքական, քաղաքակրթական, աշխարհատնտեսական, այնպես էլ ազգային անվտանգության հետազոտությունների (security studies) արժեքաբանությամբ:

3. Քաղաքական կայունությունը, որպես համալիր արդիականացման ամբողջություն, ենթադրում է ա) ոչ լեգիտիմ բռնության իրական վտանգի բացա- կայություն, կամ էլ պետության հնարավորությունը համագործակցելու հասարակական- քաղաքական կազմակերպությունների հետ՝ ճգնաժամային իրավիճակների կանխման նկատառումներով, բ) որոշակի քաղաքական ժամանակի մեջ հարահուս փոփոխվող իրականությունը նորարարացնելու կառավարության ունակություն՝ սահմանադրու- թյունից սահմանադրականության անցման գործընթացի տիրույթներում, գ) քաղաքա- կան համակարգի ինստիտուտների հասունություն և արդի հրամայականների մերդաշ- նակ արժազանքելու շահադրովածություն, դ) քաղաքական ուժերի այնպիսի հավասա- րակշռություն, որին բնորոշ են ընթացակարգային և գործառույթային համալիր զուգա- միտումներ՝ կարևորելով ընտրազանգված-ընտրամի-լիդեր համագործակցային մշա- կույթը, ե) ազգային անվտանգության փափուկ և կոշտ մոդելները համադրում՝ ներառե- լով մշակութային, ինստիտուցիոնալ, մասնակցային, համակարգաստեղծ և համա- կարգապահական բնութագրիչներ:

4. Քաղաքական կայունությունը՝ որպես համալիր արդիականացման բազմաչափ գործընթաց, հասարակությանը ձերբազատում է քաղաքական զարգացման ճգնաժամերից՝ բարձրացնելով ԱԱ որակը: Քաղաքական կայունությունը, որպես ԱԱ գործոն, ոչ միայն արևմտյան ձևաչափի, այլև սոցիոմշակութային և էթնոմշակութային արժեքների փոփոխությունների երաշխավորն է: Որպես այդպիսին՝ կայունությունը քաղաքական համակարգի արդիականացման ներքին տրամաբանության, հարաբերա- կան անկախության մեջ գտնվող ենթահամակարգերի փախազդեցության կարգի, նրանց միասնական շարժման և վերահսկվող փոփոխությունների վեկտորների ուղղությունների միջոցով աստիճանակարգային և ցանցային կառավարմամբ կանխարգելում է այնպիսի սպառնալիքներ, ինչպիսիք են ահաբեկչությունը, թրաֆիկինգը, թմրաբիզնեսը և այլն:

5. Արդի տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ քաղա- քական կայունությունն ունի նաև խաղային բնույթ, ինչն էլ հնարավորություն է տալիս շեշտել, որ կայունության (անկայունության) գնահատականները պայմանավորված են ինչպես տեղեկատվության հավաքումից, համակարգումից և ոչ պատվիրակված վերլու- ծությունից, այնպես էլ քաղաքական գործընթացներին մասնակցող դերակատարների աշխարհայացքից, դիրքորոշումից և գործունեության արժեքային կողմնորոշումից:

6. ԱԱ ինստիտուտների կամ արարողակարգերի միջոցով անորոշությունների կարգավորման և սպառնալիքների բացահայտման, կանխարգելման, չեզոքացման, հակադարձման, վերացման և կանխատեսման գործընթաց է: Որպես ապագայի կառա- վարման բաց համակարգ՝ այն կանխատեսում է անվտանգության քաղաքականության արդիականացման ցանկացած հնարավոր փոփոխականները և, սպասումների ցանցի սանդղակավորման օգնությամբ հաշվառելով մշակութային արժեքները, «դիտարկում է ամբոխին հասարակություն դարձնելու մեխանիզմները» (Թ. Պարտոն): Այս համա- տեքստում սոցիալական գործունեությունը ներառում է նպատակադրված և արժեքային ռացիոնալություն, արդյունավետություն, ավանդականություն, նորարարականացում և արդիականացում:

7. Անվտանգության քաղաքականությունը՝ որպես պոտենցիալ վտանգների, փոփոխական ռիսկերի ունիվերսումի ռացիոնալ կանխատեսման գործընթաց, բացահայ- տելով ցանցային կառավարման ժամանակ սոցիալական տարածության ընդարձակման անհրաժեշտությունը՝ արդիականացնում է լեգիտիմության քաղաքակրթական փոխա- կերպումները: Վերջինս, որպես կայուն անվտանգության ռազմավարություն, ժողովրդա- վարացնում է անվտանգության քաղաքականություն մշակույթի վերաբերյալ կուսակված

գիտելիքները՝ պայմանավորելով լեգիտիմության կապը ազգային ոգին արտահայտող լեզվամտածողության, իմացաբանական, ճանաչողական, արխիվային, բանակցային, տեղեկատվահաղորդակցական մեխանիզմների արդիականացման հետ:

8. Քաղաքական համակարգն անվտանգության քաղաքականություն է մշա- կում, իրականացնում և ապահովում «գիտավերլուծական» հարացույցի օգնությամբ: Վերջինիս հիման վրա էլ անվտանգությունը դասակարգվեց ըստ ձևի՝ «կոշտ» (պետա- կանակենտրոն) և «փափուկ» (քաղաքացիական), ըստ մակարդակի՝ ազգայինից գլոբալ: Քաղաքական համակարգի ենթահամակարգերից յուրաքանչյուրը, ունենալով ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների կանխարգելման իր պարտա- կանությունները, ռազմավարական այնպիսի գործողություններ է իրականացնում, որոնց օգնությամբ վերլուծվում է երկրի բնականոն կենսագործունեությունը խաթարող պոտեն- ցիալ վտանգների, սպառնալիքների և ռիսկերի կանխատեսման մեխանիզմները:

9. Ժողովրդավարության որակ ապահովելու նկատառումներով հայ հասարա- կությունում տարաբնույթ արժեքներ կրող սոցիալական միավորների գործունեության արդյունավետությունը նպատակահարմար ենք համարում դիտարկել մրցակցային մասնակցության տեսանկյունից՝ ենթադրելով ազգային միասնություն, ազգային մրցու- նակության ապահովում և արդի մշակութային արժեքների զանգվածային տարածում:

10. Քաղաքակրթական փոխակերպումների խաչմերուկներում հայտնված սոցիալական խմբերը, նոր իրավիճակին հարմարվելու նկատառումներով, սկսում են մեխանիկորեն մասնակել իրենց համար քիչ թե շատ ընդունելի սոցիալական ու մշակութային նոր նորմերը: Ձևավորված սոցիալական նոր խմբերը, հիասթափվելով «նոր ժողովրդավարների» քաղաքականությունից, ոչ միայն չեն նույնականացվում «կենտրոնի» հետ, այլև, օտարվելով նրանից, կորցնում են նոր հաստատված արժեք- ների լեգիտիմացման շահադրողունը: Նման երկվության պայմաններում նրանք ինքնա- իրացման, ինքնահաստատման, ինքնադրսևորման նկատառումներով արագորեն հար- մարվելով անվտանգության քաղաքականության նոր համակարգի պահանջներին՝ հարստացնում են իրենց դաշտից դաշտից սոցիալական տեխնոլոգիաների հետազոծը: Այս ամենն էլ հեղափոխականացնում են զարգացող հասարակությունների քաղաքա- կրթական փոխակերպումների գործընթացը, քանի որ վստահ են, որ կկարողանան իրենց գիտելիքներով, կապերով և քաղաքական իշխանությունը լեգիտիմացնելու իրենց իսկ դիցաբանությամբ՝ հանուն ժողովրդավարության համախմբման զբաղեցնել «նոր ժողովրդավարների» երկրորդ սերնդի դերակատարումը:

11. Քաղաքական համակարգի ինքնակազմակերպումը և ինքնակերպափոխումը պայմանավորված է քաղաքական կյանքի մասնակիցների միջև տեղեկատվության մշտական փոխանակմամբ և ստացվող, պահպանվող և փոխանցվող տեղեկատվության նկատմամբ ունեցած հնարավորությունների շրջանառման անհրաժեշտությամբ: Վերջին- ներիս օգնությամբ քաղաքական համակարգի ինստիտուտներն իրենց գործառման տիրույթ են ընդգրկում անվտանգության քաղաքականությունը՝ պահպանելով կայունու- թյան և կայուն զարգացման փոփոխությունների միջև հավասարակշռությունը: Կայունու- թյան (անկայունության) գնահատականները պայմանավորված են ինչպես տեղեկատ- վության հավաքումից, համակարգումից և վերլուծությունից, այնպես էլ քաղաքական գործընթացներին մասնակցող դերակատարների աշխարհայացքից, դիրքորոշումից և գործունեության արժեքային կողմնորոշումից:

12. Ժողովրդավարական կայունության հաստատումը նպաստում է քաղաքա- կան ազգի կայացմանը, որն էլ ազգային շահի արդիականացում է իրականացնում՝ ներառելով զաղափարական բազմակարծություն, համակարգվածություն, համազոր- ծակցություն, ինտեգրվածություն և պատմականություն: Քաղաքական կայունության նկատառումներով 73-ում ազգային շահերի արդիականացման պատասխանատվու- թյունը բաշխվում է ըստ պետական իշխանության ճյուղերի, գործարարության, կուսակ- ցությունների, շահերի խմբերի և այլ սոցիալական միավորումների միջև:

13. Քաղաքական համակարգի ցանկացած էվոլյուցիոն բարդացում, որը դրսևորվում է նոր մասնագիտական կառույցների և ինստիտուտների առաջացման ժամանակ, անհնար է առանց անվտանգության ռեսուրսների ապահովման: Այդ պատճառով էլ, ժողովրդավարական կայունության իր բարդ կառուցվածքով հիմնված է իշխանության և սեփականության լեգիտիմության, քաղաքացիների և պետության տնտեսական անկախության, բախումների իրավական կարգավորման վրա և կայուն է լինում միայն տնտեսական զարգացման հարաբերական բարձր մակարդակի դեպքում: Վերջինիս ապահովման համար ՀՀ-ում առկա են ազգային միասնության և համապատասխան նույնականացման, տնտեսական զարգացման մակարդակի բարձրացման, մշակութային նորմերի և արժեքների զանգվածային տարածման միտումներ, որոնք ենթադրում են զանգվածների քաղաքական գիտակցության աճի հետ ուղղակիորեն կապված ժողովրդավարական արժեքների բնականոն զարգացում:

14. Լեգիտիմության քաղաքակրթական փոխակերպումներն ուսումնասիրելով որպես կայուն անվտանգության ռազմավարություն՝ հնարավորություն ենք ստանում ժողովրդավարացնել անվտանգության քաղաքականության մշակույթի վերաբերյալ կուտակված գիտելիքները՝ պայմանավորելով լեգիտիմության կապը ազգային ոգին արտահայտող լեզվամտածողության, իմացաբանական, ճանաչողական, արխիվային, բանակցային, տեղեկատվահաղորդակցական մեխանիզմների արդիականացման հետ: Քաղաքակրթական փոխակերպումների գործընթացում լեգիտիմացման ապահովման համար անհրաժեշտ է կարևորել փոխադարձ ինքնորոշված քաղաքական տարածությունների իսկությունը և նրանում փոփոխություններ կատարելու բանավիճային գիտելիքների կարողությունը (ժամանակակից ցանցակենտրոն համակարգում), երբ քաղաքակրթական փոխակերպումներին ակտիվ մասնակցություն ունենալը դարձել է քաղաքական զարգացման գործընթացի յուրաքանչյուր դերակատարի գերակա ռեսուրս:

15. Ժողովրդավարության որակ ապահովելու նկատառումներով հայ հասարակությունում տարաբնույթ արժեքներ կրող սոցիալական միավորների գործունեության արդյունավետությունը նպաստակահարմար ենք համարում դիտարկել մրցակցային մասնակցության տեսանկյունից՝ շեշտելով լեգիտիմացման մասին այնպիսի գիտելիքների կիրառումը, որը հնարավորություն կտա քաղաքական կայունություն ապահովելիս բացառել հեղափոխական (հակահեղափոխական) և կոռումպացված մթնոլորտը, օրենսդրի նկատմամբ գործադիր իշխանության գերակայությունը, տարբեր մակարդակների (և ընդդիմադիր, և՛ իշխանամետ) լիդերների միջև փոխադարձ անհանդուրժողականությունը, գործադիր իշխանության անուղղակի վերահսկողություն ՁԼՄ-ների վրա, հասարակական միավորումների (ինչպես քաղաքական, այնպես էլ «երրորդ սեկտորի») նկատմամբ գործադիր իշխանության հովանավորչությունը:

16. Արդի դարաշրջանում տարբեր քաղաքակրթությունների միջև ծավալված արժեքային զուգամիտումները, բախումները և երկխոսությունները թե՛ իրական, թե՛ վիրտուալ տարածություններում ակնհայտ են դարձնում, որ գլոբալ կառավարման համակարգի և գլոբալ քաղաքացիական հասարակության ձևավորմանը մրցակցային մասնակցություն ունենալու համար էթնիկական նույնականության օգնությամբ հնարավոր է ընդարձակել ազգային անվտանգության կիրառարածականությունը: Այս իմաստով էլ ՀՀ-ում քաղաքացիավարությունը մարդկային և տեխնիկական ռեսուրսների ռացիոնալ կառավարման ցանց է, որը ներառում է հիմնախնդրային, շարունակական, ազատ քննարկումների, տարաբնույթ գաղափարների ծրագրավորում:

17. Կիրառարածական լանդշաֆտներում ձևավորվել են քաղաքական կայունությունը որպես ՀՀ ազգային անվտանգության ապահովման նոր իրողություններ: Կիրառարածականությունների ընձեռած կիրառական հնարավորությունները արժևորելու ունակությունը էթնիկ «Ես»-ին թույլ է տալիս օգտագործել կիրառարածականությունները՝ որպես ազգային անվտանգության ապահովման յուրատեսակ տարածք: Սոցիալական ցանցերում և բլոգներում շփումներն, ամբողջ աշխարհի հայերի միջև նպաստելով

«Հայկական աշխարհի» առաջ քաշած հիմնախնդիրների լուծմանը, միաժամանակ վառ արտահայտված վիրտուալ կայունության միտում ունեն հատկապես երիտասարդության շրջանում:

18. Ժողովրդավարական քաղաքական կայունության՝ որպես ազգային անվտանգության գործոնի ուսումնասիրումը համագործակցության մշակույթի համատեքստում՝ բացահայտելով «կենտրոն-ծայրամաս» ցանցային բազմաշափությունը, հնարավորություն ենք ստանում մասնակցել ոչ միայն ազգային, այլև տարածաշրջանային և գլոբալ անվտանգության համակարգերին:

Վերոշարադրյալ եզրակացությունները հնարավորություն են տալիս ներկայացնել հետևյալ առաջարկությունները.

1. ՀՀ սահմանադրական հերթական փոփոխությունների ժամանակ ՀՀ Սահմանադրությունը ներառել հողված՝ նվիրված քաղաքական գործունեության էթիկային և պատասխանատվությանը:

2. ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունը ներառել «իշխանության լեգիտիմության ապահովման մշակույթ» հասկացությունը՝ կանխելով փոխհամաձայնեցված խմբիշխանական կառույցների մենաշնորհային և գերշահութային քաղաքականությունը:

3. ՀՀ քաղաքական համակարգը կերպափոխել շարունակական ժողովրդավարության տրամաբանությամբ՝ ելակետ ընդունելով «լավ կառավարման» սկզբունքները:

4. Ժողովրդավարական կայունության հաստատման ակնկալիքով ՀՀ-ում գերխնդիր դարձնել քաղաքացիավարության հաստատումը, որը, նվազեցնելով մարգինալությունը, կնպաստի քաղաքացու կայացմանը:

5. ՀՀ-ում աշխատուժի «ստվերային շուկաներից» և կոռուպցիան ռիսկերից խուսափելու նկատառումներով զարգացնել մանր և միջին բիզնեսը՝ նպաստելով վարչատարածքային միավորումների համաչափ զարգացմանը:

6. Քաղաքական արդիականացումը և զարգացումը դնելով ԱՄՄ-ի հիմքում՝ տարբերակել ազգի քաղաքական զարգացման մակարդակը, որը ազգ-հասարակություն-անհատ անվտանգության ապահովման և՛ էվոլյուցիոն, և՛ հեղափոխական արդիականացման արդյունք է:

7. Ժողովրդավարական անցման գործընթացում առկա քաղաքական կայունություն ապահովել համախմբում հարացույցի տիրույթներում, որի պարագայում հնարավոր է, արդիական ավանդականի հետ արդյունավետ համադրելով, կանխել քաղաքակրթական իմաստավորված անվտանգության տարածությունը սպառնացող վտանգից և տրոհումից:

8. Քաղաքական համակարգի ցանկացած էվոլյուցիոն բարդացում դիտարկել իշխանության և սեփականության լեգիտիմության, քաղաքացիների և պետության տնտեսական անկախության, բախումների իրավական կարգավորման տիրույթներում:

Հետազոտության հիմնական արդյունքները արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ գիտական աշխատություններում.

1. Մամիկոն Մարգարյան. Քաղաքական կայունության դերը ներկայացուցչական ժողովրդավարության զարգացման գործում. Ներկայացուցչական դեմոկրատիայի զարգացման հեռանկարը և ընտրական գործընթացները Հայաստանում: Գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2005, էջ 60-61:

2. Մամիկոն Մարգարյան. Ժողովրդավարությունը ՀՀ ազգային անվտանգության հիմնական արժեք. Հայաստան ֆինանսներ և էկոնոմիկա (ՀՀ ֆինանսների նախարարութ. «ԷԿՈՆՄԻԿԱ ՀԱՆԴԵՍ» ՓԲԸ N 4 (93) ապրիլ 2008, էջ 10-13:

3. Mamikon Margaryan, Araksia Muradyan. Civil society (transactions on public political science) Peer-Reviewed PROCEEDINGS of the 2008 Year round faculty student multidisciplinary global conferences on Research, Volume 8, Number 1, p. 35-40:

4. Մարիամ Մարգարյան, Մամիկոն Մարգարյան. Քաղաքական կայունությունը հանրային քաղաքականության վերլուծության գործընթացում. «Հանրային կառավարում» 2009, N1, էջ 133-142:

5. Մամիկոն Մարգարյան. Համագործակցության մշակույթը՝ որպես քաղաքական կայունության երաշխիք. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «ԲԱՆԲԵՐ» գիտական հանդես, 2010, N1, էջ 126-137:

6. **М. Маргарян, Арутюнян А.Э Мамикон Маргарян.** Особенности обеспечения безопасности публичной политики в Республике Армения. Система ценностей современного общества. Сборник материалов X Международной научно-практической конференции. В 2-х частях. Часть 1 / Под общ. ред. С.С.Чернова. – Новосибирск: изд-во “СИБПРИНТ”, 2010, с. 275-279:

7. Մամիկոն Մարգարյան. Քաղաքական կայունության հիմնախնդիրները ՀՀ ժողովրդավարացման գործընթացում. «Հանրային կառավարում» գիտական հանդես, 2010, N 2-3, էջ 202-210:

8. Մամիկոն Մարգարյան. Քաղաքական փոփոխությունների դերն անվտանգության քաղաքականության ապահովման համատեքստում. «Հանրային կառավարում» գիտական հանդես, 2011, N 2-3, էջ 121-131:

9. Մամիկոն Մարգարյան. Ազգային շահերի արդիականացումը ՀՀ անվտանգության ապահովման քաղաքականության գործընթացում. ԼՐԱԲԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀՀ ԳԱՍ 2011, N 3 (631), էջ 106-115:

10. Մամիկոն Մարգարյան. Քաղաքական կայունության և կայուն զարգացման փոխհարաբերությունները ՀՀ-ում որպես շարունակական ժողովրդավարության հաստատման պայման. Հայաստան ֆինանսներ և էկոնոմիկա (ՀՀ ֆինանսների նախարարութ. «ԷԿՆՆՈՄԻԿԱ ՀԱՆԴԵՍ» ՓԲԸ N 4, 2012, էջ 65-68:

МАРГАРЯН МАМИКОН ГАРЕГИНОВИЧ

“ПОЛИТИЧЕСКАЯ СТАБИЛЬНОСТЬ КАК ФАКТОР ОБЕСПЕЧЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ”

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук, по специальности 23.00.02 – “Политические институты и процессы”

Защита состоится 12 июня 2012г. в 14:00 часов на заседании специализированного совета 056 ВАК РА, действующего по адресу ул. К. Улнеца 56/6, Ереван 0037, Республика Армения

Резюме

Основной задачей диссертационного исследования является выявление сущности политической стабильности как фактора обеспечения национальной безопасности Республики Армения в контексте демократической консолидации и эволюционной модернизации политической системы. Структура работы соответствует целям и основным задачам исследования и состоит из введения, трех глав, выводов, списка использованной литературы и приложения. В введении обосновывается актуальность исследования, представлены основные цели и задачи, теоритическое и прикладное значение, а также методология исследования.

В первой главе «Проблема политической стабильности в процессе модернизации политической системы» политическая стабильность представлена как результат целостности комплексной модернизации, в рамках которой автор системно рассматривает цивилизационные и институциональные измерения понятия «модернизация» в процессе эволюционного развития политической системы. Именно в этих измерениях по-новому рассмотрена ценностная система, олицетворяющая многомерные изменения теории модернизации К.Маркса, М.Вебера, А. Тоффлера, В. Паретто и Т. Парсонса.

После провозглашения независимости процесс трансформации политической системы РА обусловлен внедрением либерально-демократической ценностной системы. Следовательно, возникает необходимость рассмотрения понятия «политическая стабильность» в контексте цивилизационного диалога и взаимоотношений **изменение-стабильность-безопасность**. Для интеграции «периферий» в глобальное сетевое управление и их вовлечения в процессы нового международного распределения ролей необходимо расширить социальное пространство политических процессов. В результате трансформирующиеся общества получают возможность самоутвердиться, самореализоваться, модернизироваться, снижая риск иллюзорных революций.

Рассматривая в сравнении «контекстуальные» и «институциональные» подходы С. Липсета, Д. Аптера, С. Хантингтона, автор исследует политическую модернизацию как многомерный процесс **реформ, революций, государственных переворотов, выборов и конституционных изменений**. Особое значение придается модернизации политического рынка, посредством которого происходит трансформация отношений политических акторов.

Во второй главе работы «Политическая стабильность и проблемы преодоления угроз национальной безопасности РА» рассматриваются симметричные и ассиметричные угрозы, направленных против политической стабильности и национальной безопасности РА, что с ожиданием продолжительной демократии сокращает вероятность иллюзорных революций и с помощью цивилизационных трансформаций легитимности модернизирует стратегию стабильной безопасности в РА. В данном контексте автор рассматривает политическую маргинальность как угрозу национальной безопасности.

Подчеркнуты цивилизационные особенности легитимизации политических знаний, с помощью которых автор выявляет связь между политикой безопасности и эволюционной модернизацией политической системы.

Подобный системный подход оправдан, так как на современном этапе интеграции и глобализации расширяются сетевые проявления эффективности **коллективной безопасности и управления знаниями о безопасности, обеспечивающие** стратегическую стабильность. Именно в этом пространстве формируются такие механизмы становления среднего класса, которые благодаря исключительности своих инновационных подходов, предоставляют возможность развивающимся странам участвовать при новом международном разделении труда и в процессе обеспечения всеобщей безопасности.

Политическая стабильность в контексте «транзит-консолидация», рассматриваемая как фактор обеспечения национальной безопасности РА, направлена на достижение продолжительной демократии и установление устойчивого развития. В целях их обеспечения управление сетевыми рисками параллельно иерархическому управлению выдвинуло новые вызовы политической системе РА. Исходя из этой задачи, взаимообусловленность стабильности политической системы РА и устойчивого развития рассмотрены при преобладании политики обеспечения национальной безопасности. Последняя, в свою очередь, обусловлена технологической революцией и применением расширенной повестки дня безопасности в процессе формирования и установления нового миропорядка. Это даст возможность РА интегрироваться в расширяющееся европейское пространство, при этом эволюционно модернизируя политическую систему.

В третьей главе «**Демократическая стабильность в контексте реализации стратегии национальной безопасности РА**» автор рассматривает демократическую стабильность в процессе реализации стратегии национальной безопасности РА. Проведенный анализ позволил прийти к заключению, что в целях становления проекта «Армянский мир» изначально происходит трансформация национальных интересов, после чего посредством сопоставления цивилархии и демархии расширяется круг участия социальных акторов как гарантов демократической стабильности.

Вышесказанное подразумевает консолидацию акторов обеспечения безопасности, направленную на становление «Армянского мира» в пространстве РА-НКР-Дiaspora. Последнее, как практический актор национальной безопасности РА и гарант стратегической стабильности, своей продуктивной деятельностью способствует повышению уровня демократии, подчеркивая необходимость модернизации социо- и этнокультурного «Я».

Автор придерживается того мнения, что рассмотрение политической стабильности в качестве фактора, обеспечивающего национальную безопасность Республики Армения, целостно только при гуманизации сотрудиической культуры.

Mamikon Margaryan

Political stability as a factor of sustaining national security in the Republic of Armenia
“Dissertation aspiring to earn a PhD in Political Sciences under the specialization of 23.00.02 -“Political institutions and processes” (Political sciences). The public defense of the dissertation will take place on June 12, 2012 at 14:00, in the National Strategic Research Institute under the MoD of RA at the 056 HAC Specialized Chamber session
(Address: K. Ulnetsi str. 56/6, Yerevan 0037, Republic of Armenia)

Resume

The main purpose of the dissertational research is to identify the essence of political stability as a factor of sustaining national security in the Republic of Armenia in the context of democratic consolidation and evolutionary modernization of the political system. The structure of the dissertation corresponds to the purpose and main objectives of the research and comprises an introduction, three chapters, a conclusion, bibliography and appendices. The Introduction substantiates the topicality, aim and objectives of the theme, academic novelty and the main clauses to be defended. It comprises theoretical and practical significance of the dissertation, the degree of academic development of the issue, the object and subject of the research, as well as methodology.

The first chapter of the dissertation, “Main Issues of Political Stability” presents political stability as a set of complex modernization within the scope of which the author systematically studies the civilization and institutional dimensions of the notion “modernization” in the evolutionary development process of the political system. The value-interest system embodying the multidimensional changes of modernization concept of K. Marx, A. Tocqueville, M. Weber, V. Pareto and T. Parsons are viewed from a new perspective.

Since its independence the transformation process of the political system of the RA has been conditioned by the introduction of liberation-democratic value system. Thus, in order to reinterpret the notion of “political stability” it is necessary to review the latter emphasizing civilizational tendencies of **transition-stability-security** interrelationship. For “peripheries” to be involved in the global networking and to participate in the new processes of new international separation of labor, social spread of political processes should be enlarged. In result, transforming societies get the opportunity for self-establishment, for self-realization, for self-innovation, thus denying virtual revolutions.

Considering “contextual” and “institutional” approaches of S. Lipset, D. Apter, S. Huntington, the author of the dissertation views political modernization as a multidimensional process of **reforms, revolutions, coup-d-etats, elections and constitutional amendments**. Much importance is attached to modernization of the political market through which transformation of interrelations between political actors.

The second chapter of the dissertation, “Political Stability and Issues of Overcoming the Threats against the RA National Security”, studies the challenges in political stability and the issues of overcoming threats against the RA national security, which reduces the likelihood of virtual revolutions through the expectation of lasting democracy; and ensures sustainable security strategy in the RA through civilization amendments of legitimacy. In this context the author observes political marginality as a threat to national security.

Emphasis is laid upon the civilization peculiarities of **legitimizing political knowledge** through which the author has revealed the connection between the political security and evolutionary modernization of the political system.

Such a systemized approach is justified as at the current stage of integration and globalization various networking demonstrations of increasing the efficiency of collective **security and security knowledge management** expand through strategic stability. And within this scope such mechanisms for formation of the middle class arise that, due to their exceptional approaches, make it possible for developing states to participate in the new international separation of labor and the process of providing comprehensive security.

Within the scope of the “transition-consolidation” paradigm political stability as the study of the factor to maintain national security of the RA is inclined towards providing democracy and stable development. To provide these management of network risks functioning in parallel with the hierarchical governance has put forward new requirements to the political system of the RA. It is from this position that interconnectedness of political stability and stable development in the RA is studied as a priority of providing national security policy. The latter is conditioned by technological revolution and formation of the new world order, and by implementation of the expanded security agenda in the establishment process. This will give the RA the opportunity to integrate into the enlarging European territory through evolutionary innovation of the political system.

In the third chapter of the dissertation, “**Democratic Stability within the Context of Fulfillment of the RA National Security Strategy**”, the author considers democratic stability within the context of fulfillment of the RA national security strategy. The analysis suggests the conclusion that the realization of the plan to form the “Armenian Land”, first of all, transformation of national interests occurs, then, by consolidating civilarchy and demarchy, the engagement of social actors ensuring democratic stability has enlarged.

This supposes consolidation of actors providing security and tends to establish the “Armenian Land” within the scope of the RA-NKR-Diaspora. The latter, as a contemporary actor of the RA national security and a guarantor of strategic stability through its efficient activities contributes to the improvement of democracy highlighting the demand for modernization of the society and “I”.

The author of the dissertation believes the study of political stability as factor for sustaining national security of the Republic of Armenia can be complete only if implemented under the culture of cooperation.

A handwritten signature in dark ink, appearing to be 'V. Hovhannisyan', written in a cursive style with a long horizontal stroke underneath.